№ 44 ՀԻՆԳՇԱԲԹԻ, 28 ՓԵՏՐՎԱՐԻ

1913
ՔԱՌԱՍՈՒՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՀԻՆԳՇԱԲԹԻ, 28 ՓԵՏՐՎԱՐԻ № 44

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը և 7 ամսվանը 6 րուբլի.
Առանձին համարները ԱՄԷՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція „Мшакъ"
Сергіевская ул., № 5.
Tiflis, Rédaction „Mschak"
Խմբագրատան տելեֆօն № 2—58.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2
(բացի կիրակի և տօն օրերից)
Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզվով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10—20 կոպ.
Տպարանի տելեֆօն № 67.

ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ
ՄՇԱԿ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ
ՆԵՐԿԱՅ 1913 Թ. ՀԱՄԱՐ

ՔԱՌԱՍՈՒՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ. «Մշակի» տարեկան գինը 10 րուբլի է, 11 ամսվանը նոյնպէս 10 ր., 10 ամսվանը՝ 9 ր., 9 ամսվանը՝ 8 ր., 8 ամսվանը՝ 7 ր., 7 և 6 ամսվանը՝ 6 ր., 5 ամսվանը՝ 5 ր., 4 ամսվանը 4 ր., 3 ամսվանը՝ 3 ր., 2 ամսվանը 2 ր.: Մարտի 1-ից մինչև ապրիլի 1-ը 85 կոպ.:

Ամերիկայի բաժանորդները պիտի վճարեն տարեկան 6 դոլլար. Եւրոպայի բաժանորդները՝ 32 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 րուբլի. Թիւրքիայի բաժանորդները՝ 120 ղրուշ:

Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաեւ հին հասցէն եւ 40 կ. նամականիշ:

Հին բաժանորդներից խնդրվում է կպցնել փոխադրական բլանկի վրա նախկին տպագրված հասցէն իր վրա ունեցած համարով:

ՊՐԷՄԻԱՆԵՐ

«Մշակի» տարեկան այն բաժանորդները, որոնք 1913 թ. համար (սկսած յունվարի 1-ից) միանուագ կամ մաս-մաս վճարած կլինեն 10 րուբլի բաժանորդավճարը, կը ստանան **ՁՐԻԱԲԱՐ** հետեւեալ 2 գրքերը.

1) **„Մշակ" եւ հայ կինը"**, որի մէջ ամփոփված են 1872 թւականից մինչև 1891 թ. «Մշակի» մէջ լոյս տեսած առաջնորդողները, յօդուածները և բանասիրականները, որոնք նուիրված են կանանց հարցին ընդհանրապէս և հայ կնոջ առաջխաղացման գործին [illegible]: Գիրքը բաղկացած է 7+294 մեծադիր էջից, տպված լաւ թղթի վրա, Գր. Արծրունու մեծադիր գրաւիւր պատկերով եւ մօզայիկ-նկար շապկով—հայ կնոջ էմբլեմային պատկերով:

2) **„Մշակի" քառասնամեակ"** Լ. Դանիէլեանի կազմած, 1872—1912 թ.թ., 132 էջ, տպված լաւ թղթի վրայ: Գրքի մէջ ամփոփված են՝ Գր. Արծրունու, Անդր. Արծրունու, Րաֆֆիի, Գ. Սունդուկեանի, Ա. Արփիարեանի, Ե. Տէր-Մարկոսեանի, Ալ. Քալանթարի եւ Հ. Առաքելեանի պատկերները:

«Մշակի» ոչ-բաժանորդների համար առաջին գիրքն արժէ 1 րուբլի, իսկ երկրորդ գիրքը՝ 50 կոպ.: Ծանրոցածախքը՝ 15—20 կոպ. գնողի վրա:

Մեր հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція „МШАКЪ". Արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal "MSCHAK".

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ.

ՀԱՅ ԳՐՈՂՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՄԷՋ

Կ. Հ. Բ. Ընկ. դահլիճում, փետրվարի 28-ին, հինգշաբթի երեկոյեան

Ա. ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆԸ կը բանախօսէ

Աւետիք Իսահակեանի բանաստեղծութիւնները

Դահլիճը կը բացվի երեկոյեան ժամը 7-ից: Սկիզբը երեկոյեան ժամը 8-ին: Մուտքը ուսուցիչների և տիկնանց համար 25 կ., միւսների համար 40 կ.
առ. (Կ.) 160. 2—2

ԱՐՏԻՍՏԱԿԱՆ ՏՈՒՐՆԷ
ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՑ ԴՐԱՄԱՏԻԿԱԿԱՆ ԽՄԲԻ

«ՉԱՐ ՈԳԻՆ» և «ՀԻՆ ԱՍՏՈՒԱԾՆԵՐ» պիէսների ներկայացման իրաւունքը ԲԱՑԱՌԱՊԷՍ ՎԵՐԱՊԱՀՎԱԾ Է ԱՅՍ ԽՄԲԻՆ:

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԱՆԴԱՄԵՐԸ.—Տ. տ. Արմէնեան, Արուսեակ, Գուլազեան, Զարէլ, Լիւսի, Մաքի, Սոֆիկ, Տէր-Առաքելեան, պ. պ. Աբէլեան, Ալիխանեան, Արմէնեան, Ազայեան, Բերոյեան, Բաբեան, Յարութիւնեան, Վրոյր, Մանուէլեան, Ղազարեան, Լաքա, Շաւարշ, Մուրադեան, Տէր-Առաքելեան, Խաժակ:

ՌԵՊԵՐՏՈՒԱՐԸ.—Շիրվանզադէ՝ «Չար ոգին», Շանթ՝ «Հին Աստուածներ», Րաֆֆի՝ «Խաչագողներ», Քալանթար՝ «Մանր երազ», Մանուէլեան՝ «Հէքիաթ», Յակոբեան՝ «Սիրոյ գարունը», Սոֆոկլէս՝ «Էդիպ արքայ», Տօլստոյ՝ «Իօհան Ահեղի մահը», Կրաաց և Հօֆման՝ «Սատանի ճուտ»:

ԳԱՍՏՐՈԼՆԵՐ կ'ունի Սօլովցով թատրոնի դերասանուհի օր. Իզաբ. Քալանթարի.—Իբսէն՝ «Նօրա», Գէ՝ «Տրիլբի», Սումբաթով՝ «Դաւաճանութիւն»:

Սեփական դեկօրացիաներ, զգեստներ, րեկվիզիտ, բուտաֆոր, պարիկներ և այլն:

Խմբի ղեկավար՝ Ե. Աբէլեան
Ռեժիսոր՝ Ա. Արմէնեան
Յուշարար՝ Ե. Սարգսեան

ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄՆԵՐԸ.—ա) Բագու՝ Մեծ թատրոն եղբ. Մայիլեանների, Մեծ-Պասի II և III շաբաթները, բ) Արմավիր՝ Մեսօժնիկովի թատրոնում, Մեծ-Պասի V շաբաթը, գ) Եկատերինօդար՝ Մեծ թատրոնում, Մեծ-Պասի VI շաբաթը, դ) Նոր Նախիջևան՝ Քաղաքային թատրոնում, Զատկի շաբաթները, ե) Թիֆլիս՝ Արտիստական թատրոնում, մայիսի 2—7-ը, զ) Երևան՝ Ջանփօլադեանի թատրոնում, մայիսի 10—25-ը, է) Ալէքսանդրօպօլ՝ Ժողովրդական Տանը, մայիսի 25-ից մինչև յունիսի 1-ը:
(Կ.) առ. 159. 2—2

ՇԱԲԱԹ, մարտի 2 ին, ՔԱՂԱՔԱՅԻՆ ԴՈՒՄԱՅԻ ԴԱՀԼԻՃՈՒՄ տեղի կունենայ

ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅ ԳՐՈՂՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

Ժողովի օրակարգն է.
1) Ընտրութիւն նոր անդամների:
2) Հաստատութիւն գրական ֆօնդի ծրագրի:
3) Հաստատութիւն ներկայ 1913 թ. նախահաշուի:
4) Ընթացիկ հարցեր:

Ժողովի սկիզբն է երեկոյեան ժամը 7-ին:
(ա. օ.) առ. 162. 3—1

ԲԺԻՇԿ
Ե. Ի. ՄԻՆԱՍԵԱՆՑ
Ներքին, երեխայոց և ստամոքսա-աղիքային հիւանդութիւններ:
Պրոֆ. Mathieu-ի մասնագիտական կլինիկայից—Պարիզից
Ընդունելութիւնը (առաւ. ժ. 9—11-ը: երեկ. ժ. 5—7-ը:)
Միխայլովսկի պր. 86, տելեֆ. № 576.
(Ե.Հ.Կ.) առ. 179. 100—97

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ
Ս. Գ. ԿԷՕՆՃԵԱՆ
Ընդունում է ատամի և բերանի հիւանդութիւն ունեցողներին. պլոմբ, արհեստական ատամներ, ատամի հեռացում, (առանց ցաւի):
Ընդունելութիւն 9—2-ը առաւ., 4—7-ը երեկ.
Անկիւն Արսո-Արզանկայա հրապարակի և Լերմոնտովսկայա փողոցի, № 1.
(Ե.Հ.Կ.) առ. 849. 0—18

ԲԺԻՇԿ
Յ. Մելիք-Նուբարեան
ներքին և երեխաների հիւանդութիւնների, առանձնապէս թոքերի:
Թոքախտի բժշկութիւնը տուբերկուլինով և պնեվմատօրակսով:
Ընդունելութիւնը ՆՈՐ ԲՆԱԿԱՐԱՆՈՒՄ
Ամէն օր (առաւօտեան 12—1 ժ. երեկոյեան 5—7 ժ.)
Սօլոլակ, Ռտիշչեվսկայա 10 (Լերմօնտովսկ. գիմնազիայի դիմաց):
(Ե.Հ.Կ.) առ. 748. 100—61

ԲԺԻՇԿ
ՇՈՒՇԱՆԻԿ ՆԱԲԱԹԵԱՆ
Ընդունում է հիւանդներ կանանց և մանկաբարձութեան վերաբերեալ ամէն օր, բացի կիրակի օրերից, երեկ. ժամը 5—6-ը:
Հասցէն՝ Ռտիշչեվսկայա № 1.
առ. (Կ. Ե. Հ.) 4. 100—23

ԿՆԱԲՈՒԺԱԿԱՆ ԵՒ ՎԻՐԱԲՈՒԺԱԿԱՆ
ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Ռտիշչեվսկայա 13, տելեֆօն 4—21.
Ընդունելութիւն թէ կանացի և թէ ներքին, նոյնպէս և վիրաբուժութեան կարիք ունեցող միայն (стаціонаръ) հիւանդների (բացի վարակիչ և հոգեկան հիւանդութիւններից), վաղօրօք գրվելու պայմանով:
Ընդունելութիւն կանացի, [illegible] և մանկական հիւանդութիւն ունեցող երթեւեկ հիւանդների, ամեն օր՝ ցեր. ժամը 11-ից մինչև 12-ը:
Ընդունելութիւն պրոֆ. Մ. Ս. Սուբբոտինի կողմից վիրաբուժ. կարիք ունեցող հիւանդների, վաղօրօք գրվելու պայմանով, երկուշաբթի և հինգշաբթի օրերը ցեր. ժամը 1—2-ը:
Հիւանդանոցի բժիշկները.
Ա. Ա. Յարութիւնեան, Ն. Ն. Վեսելօվզօրով, Վ. Ա. Զակրժևսկի, Ի. Գ. Կալամկարեան, Ա. Ա. Նովիցկիյ, Գ. Ն. Տէր-Ներսէսեան, Ն. Զ. Ռամիկեան, Ա. Ր. Փիշեր, Ս. Պ. Շահպարոնեանց: Կոնսուլտանտ՝ պրոֆեսոր Մ. Ս. Սուբբոտին:
(Հ.Կ.) առ. 779. 100—34

ԲԵՐԼԻՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ԲԺՇԿԱՊԵՏ
Գ. Գ. ՄԵՀՐԱԲԵԱՆՑ
Ներքին հիւանդութիւններ՝ առանձնապէս կրծքի, ԹՈՔԵՐԻ և սրտի: Բժշկութիւն նաև ՏՈՒԲԵՐԿՈՒԼԻՆՆԵՐՈՎ, ՌԱԴԻՈ պրէպարատներով և վիրաբուժական միջոցով՝ ՊՆԷՎՄՕԹՕՐԱՔՍՈՎ:
Ընդունելութիւնը ամէն օր, առաւօտեան ժամը 9—1-ը և երեկոյեան ժամը 5—8-ը:
Չքաւորներին առ. ժամը 9—10-ը ձրիաբար:
Սօլոլակ, Բէհբութեան փող. № 23 (անկիւն Գանովսկայա): Հեռախօս 7—92.
(ա.օ.) առ. 93. 100—17

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ
Գ. Յ. ԳԱՐԱԿԻՒԼԵԱՆ
(Նախկին օգնական Կամսայեվի)
Վերադառնալով արտասահմանից վերսկսել է հիւանդների ընդունելութիւնը
Ամեն օր՝ առաւօտեան ժ. 9—1½-ը և երեկ. ժ. 4—7-ը:
Վելեամինովսկայա փողոց № 4, բն. 3.
առ. (ա.օ.ժ.) 129. 50—9

ՎԱՂՎԱՅ ԹԻՒՐՔԻԱՆ ԵՒ ԿՈՎԿԱՍԸ
II

Մեր նախորդ յօդուածում հիմք ընդունելով Մամոնտովի արտայայտած կարծիքը, մենք հանգեցինք այն եզրակացութեան, որ երբ Թիւրքիան, արտաքսվելով Եւրոպայից, կենտրոնանայ և պարփակվէ Ասիայում, նա կարող է Ռուսաստանի հետ ունեցած բարդութիւնների դէպքում աւելի նպաստաւոր ռազմագիտական դիրք բռնել, քան Ռուսաստանը, որովհետև, շնորհիւ ծրագրված երկաթուղային գծերի, նա կարող է արագօրէն շարժել զօրքերը դէպի կովկասեան սահմանները: Այդ վտանգի առաջն առնելու և աւելի նպաստաւոր ռազմագիտական դիրք բռնելու միակ միջոցն է՝ ունենալ երկաթուղագիծ մինչև Կարաուրգան—Թիւրքական սահմանագլուխը:

Եթէ Թիֆլիս — Ալէքսանդրօպօլ— Կարս — Սարիղամիշ երկաթուղային գիծը շարունակվի մինչև Կարաուրգան (Սարիղամիշից մինչև Կարաուրգան 30—35 վերստ տարածութիւն է), այն ժամանակ Թիֆլիսը կապված կը լինի ուղղակի թիւրքական սահմանագլխի հետ և, հետևաբար, մօբիլիզացիա կամ պատերազմ յայտարարվելու դէպքում կովկասեան զօրաբանակի առաջընթաց խմբերը կարող են անմիջապէս, մի քանի ժամից յետոյ մտնել թիւրքական հողը և խուժել երկրի ներսը: Այդպիսի հանգամանքը անգին գերակշռութիւն կը տայ ռուսական զօրքին և կարող է նոյն իսկ վճռել պատերազմի ելքը, որովհետև ներկայ թիւրք-բուլղարական պատերազմը պարզ կերպով ապացուցեց, թէ ով կարողանում է գրաւել նախաձեռնութիւնը, այսինքն ով կարողանում է նախայարձակ լինել և մտնել առաջինը թշնամու երկիրը, նա տանում է վերջնական յաղթութիւնը:

Շնորհիւ Սարիղամիշ — Կարաուրգան երկաթուղային գծի ռուսական զօրքերը կարող են անմիջապէս մտնել թիւրքական հողը, իսկ Կարաուրգանից մինչև Էրզրում, Հայաստանի բարձրաւանդակի մայրաքաղաքը, միայն 103 վերստ է, մի տարածութիւն, որ ռուսական զօրքը կարող է կտրել 2 օրում:

Սարիղամիշից դէպի Կարաուրգան ուղղութիւնը ամենաձեռնտուն է և ամենայարմարը զօրքի արագ շարժողութեան համար դէպի ամբողջ հայկական թատերաբեմի գլխաւոր կէտը—Էրզրումը, մինչ ուրիշ ուղղութիւնները՝ Օլթիի և Բաշ-քեօյի վրա՝ շատ քիչ յարմարութիւններ են ներկայացնում:

Եւ զինուորական վարչութիւնը քաջ կշռելով Սարիղամիշ—Կարաուրգան գծի կարևորութիւնը՝ կազմել է ծրագիր և ներկայացրել ի հաստատութիւն, բայց, ինչպէս ասացինք, Դումայի յանձնաժողովը մերժել է այդ ծրագիրը:

Եւ սակայն թիւրք-բալկանեան պատերազմի հետևանքով ստեղծված քաղաքական կացութիւնը և այն վտանգը, որ այդ նոր կացութեամբ կարող է սպառնալ Կովկասին Ասիական Թիւրքիայի կողմից, անհրաժեշտ են դարձնում այդ ծրագրի իրագործումը: Այդ է պատճառը, որ շատերը չեն կամենում հաւատալ, թէ Դուման որոշել է մերժել ծրագիրը, այլ ենթադրում են, որ հաւանօրէն նա յետաձգել է նրա քննութիւնը՝ լրացուցիչ տեղեկութիւններ հաւաքելու համար:

Հ. Ա.

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)
26 փետրվարի

Պետերբուրգ.—Այսօր, Ալէքսանդր III կայսրի ծննդեան օրը, Պետրոս Պօղոս տաճարում կատարվեց հոգեհանգիստ ներկայութեամբ Թագաւոր Կայսրի, Թագուհի Կայսրուհի Մարիա Ֆեօդորօվնայի, Մեծ Իշխանների և Մեծ Իշխանուհիների:

Նոյնն Մեծութիւնները մեկնեցին Ցարսկոյէ Սելօ:

Պաշտօնական: Բիւլլետէն Նորին Կայսերական Բարձրութիւն Մեծ Իշխանուհի Տատիանա Նիկոլաեվնայի առողջական դրութեան մասին.

«Մեծ Իշխանուհի Տատիանա Նիկոլաեվնան հիւանդացաւ տիֆով: Այսօր տաքութիւնն էր առ. 39,1, ժ. 12 ին՝ 38,4, եր. ժ. 5 և 30 ր.՝ 38,9, եր. ժ. 8 ին՝ 39,6, զարկերակը 84. Ցարսկոէ Սելօ փոխադրելը հիւանդը լաւ տարաւ: Ինքնազգացումը բաւարար է»: Ստորագրեց՝ պալատական բժիշկ Բոտկին: 26 փետրվարի 1913 թ.:

—

Պետերբուրգ.—Պաշտօնական: Ռուսաց և աւստրո-ունգարական կառավարութիւնների միանման հաղորդագրութիւնը: Մի կողմից Նորին Մեծութիւն աւստրիական կայսրի և ունգարական թագաւորի, իսկ միւս կողմից Նորին Կայսերական Մեծութիւն Թագաւոր Կայսրի միջև վերջերս տեղի ունեցած նամակային փոխանակութիւնը վերստին ապացուցեց, որ բարեկամական յարաբերութիւնները երկու միապետութիւնների միջև չը շօշափվեցին Բալկանեան թերակղզում կատարվող դէպքերից և նրանց ջանքերի նպատակ առաջվայ նման հանդիսանում է խաղաղութեան պահպանումը: Այդ պատճառով երկու կառավարութիւնները եկան այն եզրակացութեան, թէ մի քանի զուտ պաշտպանողական միջոցները, որ ձեռք են առնված երկու տէրութիւնների սահմանակից շրջաններում, այլ ևս արգասիք չեն կարող լինել քաղաքական հանգամանքների, ուստի և վճռված է աւստրո-ունգարական զօրքերի կազմը Գալիցիայում կրճատել մինչ սովորական նորմայի. հաւասարապէս կարգադրութիւն կը լինի ռուս զօրքերի նկատմամբ, որոնք արձակվելու էին ի պահեստ անցեալ տարվայ աշնանը:

Այս հաղորդագրութեանը Պետ. Հեռ. Գործակալութիւնը լիազօրված է աւելացնելու, որ Վիեննայի կաբինետի հետ ունեցած բացատրութիւններից պարզվեց, թէ Աւստրո-Ունգարիան ոչ մի ագրեսիվ մտորում չունի իր հարևանների դէմ.

—

Աստրախան.—Փետրվարի 18-ին սառոյցի կտորի վրա ջրի հոսանքից տարված 22 ձկնորսներին ազատեցին.

—

Լոնդոն.—Բուլղարիայի և Ռումինիայի միջև միջնորդ լինելու հարցը յանձնվեց դեսպանների քննութեանը Պետերբուրգում:

—

Կ. Պոլիս.—Մամուլի բիւրօն հերքում է լրագիրների տեղեկութիւնը, թէ իբր Տրապիզոնի վրայով թռիչք են կատարել ռուս օդագնացներ:

—

[illegible] հաղորդում է, որ զինուորական նոր օրինագծով ամեն տարի զօրքի քանակը աւելանալու է 68,000 մարդով երկու տարի շարունակ. Աւելանալու են 4000 օֆիցեր, 15,000 ունտեր-օֆիցեր և 117,000 զինուոր: Օրինագծով պահանջվում է և 30,000 ձի դաշտային արտիլերիայի համար: Լրագիրն ասում է, որ քանի որ նոր սպառազինումները արևելեան սահմանի պաշտպանութեան համար են, ուստի այդ տեղերում կը դրվեն ծանր տեսակի թընդանօթներ:

Վոլֆի գործակալութիւնը հաղորդում է, որ լրագրի յիշեալ տեղեկութիւնները մասամբ միայն ճիշդ են.

Երկար վիճաբանութիւններից յետոյ լանդտագը բիւջէտային մասնաժողովին յանձնեց այն օրինագիծը, որ նետամուտ է ուժեղացնել գերման տարրը Արևմտեան Պրուսիայի և Պօզնանի նահանգներում:

—

Թէհրան.—Ժանդարմերիայի գլխաւոր հրահանգիչ Եալմարսէնը եկաւ Սպահան՝ Պարսկաստանի հարաւում ճանապարհների պաշտպանութիւնը կազմակերպելու համար:

—

Լոնդոն.—Լրագիրները տպել են այն ուղերձի բնագիրը, որ սուֆրաժիստուհիները ապարդիւն կերպով ջանում էին յանձնել Թագաւորին՝ Թագաւորական շքերթի ժամանակ: Ուղերձի մէջ Թագաւորի ուշադրութիւնն է հրաւիրվում այն հանգամանքի վրա, թէ անհրաժեշտ է կանանց տալ ընտրողական իրաւունք իբրև միակ միջոց վերջ դնելու սուֆրաժիստուհիների ռազմի արշաւանքին: Կալանաւորված հինգ սուֆրաժիստուհիներից մինը դատապարտվեց մի ամսով բանտարկութեան, չորսը՝ երեք շաբաթով:

—

Նիւ-Եօրկ.—Շաբաթ օրը Գվատեմալայի հանրապետութեան մէջ երկրաշարժից կործանվեց մի ամբողջ քաղաք: Բազմաթիւ զոհեր կան:

Սան-Դոմինգոյի հանրապետութեան պրեզիդենտը ցանկութիւն յայտնեց հրաժարվել: Այնտեղ է գնացել ամերիկական մի ռազմանաւ՝ օտարազգիներին պաշտպանելու համար:

ԲԱԼԿԱՆԵԱՆ ՏԱԳՆԱՊԸ

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)
26 փետրվարի

Բելգրադ.—Լրագիրները հաղորդում են, որ մինիստրների խորհուրդը վճռեց ընդունել միջնորդութիւնը, որի պայմանները կը մշակվեն Սոֆիայում:

Սկուտարի տակ Բրդիցայի ռմբակոծութեան ժամանակ մեծ թւով սերբիական զոհերի պատճառ դարձած գընդապետներ Պուտնովիչը և Բուլիչը պաշտօնանկ եղան:

«Պօլիտիկա» լրագիրը յայտնում է, որ աւստրիական դեսպանը բողոքեց մինիստր-նախագահ Պաշիչի առաջ սերբիական զօրքեր Սկուտար ուղարկելու առիթով, պնդելով յետ վերցնել Չերնոգորիային զինուորական օգնութիւն տալու որոշումը, որովհետև Սկուտարը վճռված է մտցնել աւտոնոմ Ալբանիայի սահմանների մէջ: Պաշիչը պատասխանեց, որ, համաձայն պայմանի, Սերբիան պարտաւոր է օգնել դաշնակիցներին, չը նայած այն հանգամանքին, թէ ումն է պատկանելու Սկուտարը: Լրագիրը հաղորդում է, որ Սկուտար ուղարկվելիք սերբիական զօրքերի առաջին խումբը հասել է Ալէսիօ.

Լոնդոն.—Դեսպանների խորհրդակցութիւնը այսօր 2 ժամ տեւեց։ Դաշնակից բալկանեան պետութիւնների պատասխանները դեռ ստացված չեն։

Դեսպանների հետեւեալ խորհրդակցութիւնը տեղի կունենայ այսօր։

—

Լոնդոն.—Համայնքների պալատ։ Ասկվիտը յայտնեց, որ դեսպանների խորհրդակցութիւնը եկել է համաձայնութեան երկու էական կէտերի վերաբերութեամբ. Ադրիատիկ ծովափի և սերբիական արտահանութեան հարցը կարելի է վճռված համարել. Ալբանիայի խնդրի նկատմամբ մեծ պետութիւնները միաբերան ընդունել են նրա աւտօնօմիան Եւրոպայի երաշխաւորութեամբ։ Պահանջվում է համաձայնութիւն կայացնել միայն ոչ այնքան էական նշանակութիւն ունեցող երկու կէտերի առիթով. այն ժամանակ ապահովված կը լինի մեծ պետութիւնների լիակատար համաձայնութիւնը։

Մեծ պետութիւնների խմբակցութիւնները նոյնն են. դրանց փոխադարձ սրտագին յարաբերութիւնները հետզհետէ աճում են։

Մատնանշելով, որ Թիւրքիան համաձայն է միջնորդութեանը, սպասվում է նաև դաշնակիցների համաձայնութիւնը, և յայտնելով, որ Ռումինիան և Բօլգարիան նոյնպէս պատրաստ են օգտվել միջնորդութիւնից, Ասկվիտը ասաց, որ Մեծ Բրիտանիան մինչ այժմ գործում էր հաշտութեան ու համաձայնութեան ոգով, այդպէս էլ նա մտադիր է շարունակել. դէպի Ֆրանսիան և Ռուսաստանը յարաբերութիւնները աչքի են ընկնում սրտագին բնաւորութեամբ ու մտերմութեամբ։ Անգլիան մտադիր է այդ պահպանել։ Կառավարութեան կարծիքով, նա նկատում է վստահութեան նշան նաև Միացած կառավարութիւնների կողմից։

ՀԱՇՏՈՒԹԻՒՆԸ ՄՕՏԱԼՈՒՏ

—

Սօֆիա, 19 փետրուար

Հաշտութեան կնքման մասին անհրաժեշտութիւնը աւելի և աւելի կը զգացուի Կ. Պօլսոյ մէջ։ Մէկ քանի օր առաջ անպաշտօն կերպով Սօֆիայի անգլիական դեսպանը Գեշօվի իմացուցած էր, որ Հակկը փաշան սըր Էդուարդ Գրէյի հասկցուցած է, թէ Թիւրքիան պատրաստ է վազ անցնելու Ադրիանուպօլսէն և իբր սահման ներկայացուցած է Էնիադա—Էնոս գիծը, միննոյն ժամանակ դաշնակիցները պատերազմական տուգանք չպահանջելու պայմանով։

Բուլգար կառավարութեան պահանջները արդէն յայտնի են, զորս Գեշօվ նորէն յայտնած է, այն է՝ Միդիա—Ռոդօստօ և պատերազմական տուգանք։

Բայց կերեւի թէ Թիւրք կառավարութիւնը կաճապարէ հաշտութեան խնդիրը, ահա ատոր համար կերեւի մասնաւոր կերպով դիմեր է Պօլսոյ ռուսական դեսպան Գիրսին։

Այս վերջինին ալ Մահմուդ Շէվքէթ փաշա առաջարկած է միննոյն պայմանները, ինչ որ Հակկը փաշան առաջարկած էր սըր Էդուարդ Գրէյին։ Սօֆիայի ռուսական դեսպան Նեկլիւդօվ Թիւրքական այս առաջարկը ներկայացուց մինիստր-նախագահին, որը նորէն պնդեց բուլգարական պահանջներուն վրայ։

Միւս կողմէ՝ կըսուի թէ բանակցութիւններ կը կատարուին Պետերբուրգի մէջ Թուրխան փաշայի և բուլգարական դեսպան Բոբչէվի միջեւ։ Պօլսէն առնուած տեղեկութեանց համեմատ՝ Թիւրք կառավարութիւնը Ռուսիոյ միջամտութիւնը անհրաժեշտ համարեր է։ Կը կարծուի, որ այսպէս մասնակի բանակցութիւններով—ըլլայ Լօնդօնի մէջ Հակկի փաշայի կողմէ, Պետերբուրգ՝ Թուրխան փաշայի և Բոբչէվի միջև—պիտի կարողանան հիմ մը գտնել հաշտութեան կնքման, որը այնքան ուշ չպիտի մնայ։

Երիտ.-Թիւրք կառավարիչները — Էնվէր բէյեր և Մահմուդ Շէվքէթներ—տեսան, որ բոլոր իրենց մեքենայութիւնները ի դերև ելան։ Կառավարութեան գլուխ անցնելով, անոնք կարծեցին, թէ պիտի յաջողին աւելի պատուաբեր հաշտութիւն մը կնքել Թիւրքիոյ համար, բայց իրենց կրած նորանոր պարտութիւններով համոզուեցան, որ անկարող են շարունակելու պատերազմը։ Ալ աւելի՝ որ տնտեսապէս բոլորովին տագնապալի վիճակ մը ունի այժմ Թիւրքիան։

Մկրտիչ Ներսէսեան

ԹԻՒՐՔԻԱՅԻ ԵՐԷԿՎԱՅ «ԲԱՐԵԿԱՄՆԵՐԸ» ԵՒ ԱՅՍՕՐՎԱՅ «ԹՇՆԱՄԻՆԵՐԸ»*)

(Մի էջ եւրոպական դիւանագիտութեան պատմական խաղերից)

III

Պատերազմի շօշափելի արդիւնքները եկան ընդ միշտ խոչ դնելու պատմական մեծախօսութեան երէկի առանձնայատուկ բնոյթի վրա։ Կարծէք բալկանեան միութեան հետեւողական հարւածների հետ՝ քայլ առ քայլ յեղաշրջվում էին հասարակական տրամադրութիւնը և դիւանագիտական մեքենայութիւնների ալաքը Արեւմուտքում։ Ինչպէս շատ յաճախ, այնպէս էլ այս անգամ սրի ու արեան քաղաքականութիւնը՝ իր սրընթաց ու գոռ հաղթանակներով ունեցաւ, վերջին հաշւով, իրայատուկ ներգործիչ անդրադառնումներ միջազգային բնաւորութեամբ։ Եւ Մերձաւոր Արևելքի փոթորիկը եղաւ մէկը այն երատեսակ անակնկալներից, որոնք աննահանջ ալիքներով շղջակոյտ նետեցին վաղեմի ծանրախոհ մտածողների շատ ծրագիրներ՝ արդիւնք երկարաձիգ ժամերի խաղաղ կշռադատումների։ Այդ կէտում՝ այսինքն հետեւանքների յեղաշրջիչ ներգործումներով՝ չափազանց նման կողմեր ունեն պատերազմն ու յեղափոխութիւնը։

Որքան մեծ էր այն միամիտների թիւը՝ քաղաքական աշխարհում թէ հասարակ պրօֆանների մէջ, որոնք հիմնվելով պետութիւնների կոլլեկտիվ յայտագրի յիշածս կէտի վրա՝ նախապատերազմական կամ, ինչպէս մենք բնորոշեցինք, խօսքի քաղաքականութեան շրջանում, համոզված էին, որ բալկանեան միութեան գրաւած թիւրքական գաւառները, գոնէ դրանց մեծ մասը, կրկին կը վերադարձվին Թիւրքիային պատերազմից յետոյ, խաղաղութեան դաշնագրով՝ Եւրոպայի թելադրութեամբ։ Այդ միամիտ հաւատը տածում էին ամենից շատ թիւրքական շրջաններում՝ պատմական անցեալի հաճելի փորձերը ի նկատի ունենալով։ Իսկ այդ հաւատի հետ շաղկապւում էին միւս կողմից Թիւրք քաղաքագէտները վառ յոյսեր համաեւրոպական կատաստրօֆի, որի նախանշանը գտնում էին նրանք աւստրօ-սերբիական կոնֆլիկտի մէջ. մի կատաստրօֆ, որ կը նսեմացնէր թիւրքական պարտութիւնների ամօթաբեր փաստը. դրանից ինչ աւելի լաւ բան կարող էին երազել օսմանեան մահիկի պանիսլամիստ իդէօլօգները, քան այդպիսի հաճելի հեռանկարները։

Աւա՜ղ. «բաղդ բաժանող» աստուածը թթու և չարակամ դէմք ցոյց տուեց դէպի պարտվածը, թոյլն ու տկարը. չէ՞ որ մեր ժամանակի կրօնն ու բարոյականութիւնը քարոզում են, որ Աստուած միշտ ուժեղի և յաղթողի կողմն է...

Լօնդօնի խորհրդաժողովները հրապարակի վրա դրին մեդալի միւս, տակաւին անծանօթ կողմը։ Ծրագի լուսով քրքրեցինք մենք արդէն մեդալի առաջին երեսը և գտանք, որ պաշտօնական Եւրօպայի բանած տակտիկը, պատերազմի բռնկումից առաջ կրում էր իր [illegible] կուսակցական միակողմանիութեան դրոշմը, յօգուտ Թիւրքիայի և ի վնաս Բալկանների։ Այժմ, սակայն, գտնում ենք մեդալի միւս երեսի վրա տարբեր միակողմանիութեան շեշտակի հակառակ արտայայտութիւնը՝ յօգուտ Բալկանների և ի վնաս Թիւրքիայի։ Երկու ամիս առաջ պետութիւնների հաւաքական կամքի Սօֆիա յղած արտայայտիչ յայտագիրը զգուշացնում էր քառանդամ զինակցութեան՝ սուր չը շողացնել ի զուր, որովհետև իրանց արեան ու քրտինքի արդիւնքը՝ Թիւրքիայից գրաւած գաւառները՝ կրկին պիտի վերադարձվեն իրանց տիրոջ՝ status quo-ն անխախտ պահպանելու համար։ Երկու ամիս յետոյ նոյն պետութիւնների Պօլիս յղած միահամուռ նօտան լուրջ տոնով յայտարարում էր Բ. Դրանը ոչ միայն այն, որ Թիւրքիայից արդէն նուաճված բոլոր գաւառները կորչում են անհետ ու անդարձ, այլ և պատերազմական անցքերի պատմութեան մէջ մի շատ անսովոր պահանջ. օսմանեան կայսրութիւնը պէտք է, ըստ այդ նօտայի, նոյնիսկ դեռ մինչև զինադադարի բոպէն չը նուաճած, այլ միայն պաշարած քաղաքը յանձնէր Բօլգարիային։ Status quo-ի անխախտ պահպանման երդուեալ կողմնակիցները դարձան նոյն status quo-ի փաստական նահատակման պատրաստակամ սրբագործողները՝ իրաւական սանկցիաներով։

Թիւրքիայի երէկվայ «բարեկամները» դարձան այսօր նրա «թշնամիները»։

«Մի ամիս միայն։ Եւ դեռ չեն մաշվել նոյնիսկ կօշիկները»...

Այսպիսի ողբասաց տոնով էր ուղղում Համլէտը իր անէծքը մօր արարքի հասցէին։

Մի քանի շաբաթ միայն։ Եւ դեռ չէ չորացել նոյնիսկ թանաքը այն յայտագրի, որով Եւրօպան զրկում էր Բալկաններին իրանց զոհաբերութիւնների արդիւնքը վայելելուց՝ յաղթութեան դէպքում։ Իսկ այժմ...

Եթէ ոչ այս խօսքերով, ապա ճիշդ այս իմաստով էին դառնապէս գանգատվում Թիւրքական քաղաքագէտները Եւրօպայի հասցէին՝ Պօլսում թէ Լօնդօնում։

Ահա եւրօպական դիւանագիտութեան կատակերգութիւնը՝ իր ամբողջ հասակով, իր մեծութեամբ ու որակով։ Ինքը՝ դիպլօմատիան, իր գենեզիսով և առաջընթացութեան մեթօդներով, ինտրիգան խաղերի մի բարդ հիւսուածք է։ Խաղեր, սակայն, ոչ անիմաստ խրախճանքի համար և ոչ էլ արդիւնք պարապ ժամանցի։ Սեփական շահերի հրամայական թելադրութիւնն է, քաղաքական մոմենտի պահանջկոտ անհրաժեշտութիւնը, որ աջ ու ձախ, յետ ու առաջ թիավարում է ղեկը այն մեծ նաւի, որի անունն է պետական դիւանագիտութիւն։ Եւ որովհետև այն անեզր ովկիանը, ուր մեծ ազգերի սպառազէն նաւաստիները ծփուն ալիքների հետ խաղ բռնած՝ լարված ուժերով մրցում են իրար հետ և միմեանց դէմ՝ հակամարտութեան բոլոր պերիպետիաներում, միշտ թիավարելով իրանց ղեկը ըստ մոմենտի պահանջի ցուցմունքների, ուստի անմտութիւն է կատարելապէս պետական դիւանագիտութիւնից պահանջել կամ սպասել սկզբունքային որեւէ հետեւողականութիւն։ Դիպլօմատիայի կտրած ճանապարհը ուղղաձիգ հարթ տարածութիւն չէ ներկայացնում, այլ զիգ-զագ ու մացառոտ, զառիվայրերով լի անձուկ շաւիղ։ Նրա այսօրվայ քայլը ժխտումն է նշանակում իր երէկվայ քայլի, որպէսզի վաղը կրկին ժխտէ իր այսօրվայ քայլը։ Նրա այսօրվայ «ոչ»-ը բացասումն է երէկվայ «այո»-ի՝ վաղը կրկին «այո» արտասանելու պայմանով։ Նրա երէկվայ «ջանը» փոխվում է այսօր «չոռի»։ Եւ նա, որին հաւաքական դիպլօմատիան քաղաքակիրթ Եւրօպայի՝ դարեր շարունակ կրկած «մայրական» գուրգուրանքով պահպանել է՝ նոյնիսկ տանելով անկիրթ «մանուկի» բոլոր չարագործութիւնները համբերատարութեամբ, այսօր անխնայօրէն աքցում է Եւրօպան նոյն չարաճճի «մանկան», ով գիտէ թերևս վաղը կրկին նրան գրկելու պայմանով։

Ոչ մի տեղ գուցէ հակասութեան դիալեկտիկան չէ գտնում իր փայլուն կիրառումը այնպիսի ճոխ փաստերով, ինչպէս պետական քաղաքականութեան արուեստի սահմանում։

Վա՜յ այն իդէալիստներին, որոնք մօտենում են դիպլօմատիայի ներկայացուցիչներին այնպէս, ինչպէս սովորաբար մօտենում են իր ազնիւ խօսքը ճշգապահութեամբ կատարելու պարտականութիւն ստանձնած կօրրեկտ անհատին։ Վա՜յ նրանց, որոնք դիմում են քրիստոնեայ Եւրօպայի գութը հայցելու՝ աւետարանական վարդապետութեան անունով. դիմում են քաղաքակիրթ Արեւմուտքին՝ մարդասիրութեան և բարոյականութեան էժանագին կօդէքսները շալակին և այլն և այլն։

Թիւրքական մամուլն ու քաղաքական շրջանները նոյնքան պարզամիտ էին՝ յիշեցնելով Ադրիանուպօլիսը պահանջող պետութիւններին սրանց երէկվայ բարեկամական տոնն ու վերաբերմունքը, որքան և դեռ էլ աւելի պարզամիտ են հայ իդէալիստները՝ յիշեցնելով պետութիւններին Բերլինի դաշնագրի նրանց ստորագրած 61-րդ յօդուածը Թիւրքահայ րէֆօրմների մասին, կարծելով որ հէնց այդ հանգամանքը որոշ գրաւական է, որ Եւրօպան իր 35 տարուց առաջ տուած խոստումը այժմ կատարէ։ Որպիսի՜ տառապանքներով էր արիւն հոսեցնում Մակեդօնիան՝ իր Սարաֆօֆների խմբերով, որքան էր երկինք աղաղակում նա՝ անդադար կրկնելով նոյն դաշնագրի իրան վերաբերող 23-րդ յօդուածը։ Ապարդիւն. «խոստմնազանց» Եւրօպան մատը մատին չէր խփում արեան բաղանիքների հանդէպ։ Իսկ Ալբանիան, այդ վայրենի, նահապետական լեռնականները, որոնց մասին առանձին դաշնագրային «պարտադիր» խոստումներ գոյութիւն չունէին։ Այսօր ինքը Եւրօպան է, որ իբրև բերմունքով ընդառաջեց նրանց՝ անկախութեան հրապուրիչ պատգամներ հաղորդելով այդ խաշնարած ժողովրդին։

Որքա՜ն անմիտ պիտի լինի մէկը, եթէ ուզենայ դիւանագիտական այս անվերջ խաղերի, զիգ-զագ ուղիների մէջ սկզբունքային հետեւողականութեան կամ պարտաճանաչութեան նորմաներ որոնել։

Այն Եւրօպան (դրա տակ հասկացէք միշտ պաշտօնական Եւրօպայի քաղաքական կօնցերտը), որ պատերազմի ամպամած նախօրեակին (սեպտեմբերի վերջերին և հոկտեմբերի սկիզբներին) հրաժարվում էր՝ բալկանեան միութեան, մանաւանդ Բօլգարիայի յայտագրի համաձայն, հասարակ ճնշում գործադրել Թիւրքիայի վրա՝ իր քրիստոնէական գաւառների րէֆօրմների հարցը շուտափոյթ լուծելու համար՝ Եւրօպայի պաշտօնական կօնտրօլի հետամտութեամբ,—Թիւրքերի երէկվայ «բարեկամ» այդ նոյն Եւրօպան այսօր տրամագծօրէն այլ դէմք է ցուցադրում հրապարակով։ Նա ոչ միայն նուաճված բոլոր քրիստոնէական գաւառների խլումը՝ Բալկանների կողմից՝ հաստատեց, այլ և պահանջեց եւրօպական Թիւրքիայի մի այնպիսի կարևոր բերդի՝ մահմեդական «սրբազան» յիշատակավայրի (Ադրիանուպօլիս քաղաքի) յանձնումը, որի հետեւանքը եղաւ Կ. Պօլսի նոր յեղափոխութիւնը, հին կառավարութեան անկումը և պատերազմի կրկնակի բռնկումը։

Դա պետութիւնների ակտիվ գործի քաղաքականութիւնն էր։ Խօսքի քաղաքականութեամբ «բարեկամ» էին նրանք Թիւրքիային, գործի քաղաքականութեամբ, իրական յարաբերութիւնների փոփոխութեան պահանջով՝ դարձան նրանք Թիւրքիայի «թշնամիները»։

Դիւանագիտական խաղի ամբողջ զուարճալիութիւնը կայանում է հէնց դրա մէջ։

B. Intimus

---

*) Տես «Մշակ» № 43.

ԲՐՈՒՍԱՅԻ ՄՈՒՖՏԻԻ ՊՐՕԿԼԱՄԱՑԻԱՆ

—

Բրուսայի բնակիչներ.

Ի զէն։

Բարբարոս թշնամին ներս է խուժում Ռումէլիայի մեր ամենանուիրական նահանգները։ Այն տեղում, ուր սուլթան Խիւդավանդիգեարը մարտիրոսացաւ, մեր նախահայրերի գերեզմանները ոտքի տակ են տըրված. խաչերը անկվել են մեր մզկիթների վրա. զանգերն հնչում են մեր տաճարների վրա. հարիւր հազարաւոր անմեղ զոհերի արիւնը գետի նման հոսում է. Նրանք ամենազզուելի, ամենակատաղի կերպով ուզում են արատաւորել մեր պատիւը, իսլամութիւնը, մարդկութիւնը։

Այդ բարբարոսները, որոնց գործողութիւնները նսեմացնում են ամենավայրենի ցեղերի արարքները, գալիս են գրաւելու մեր մայրաքաղաքը, սրբապղծելու մեր փադիշահի պալատը, մի նոր յարձակում գործելու։ Մի կողմից նրանք գնդակների տարափ են թափում հերոսական Ադրիանուպօլիս քաղաքի վրա, միւս կողմից նրանք պատրաստվում են արշաւել Կ. Պօլսի վրա։

Թշնամին հանեց իր դիմակը։ Դրա նպատակն է այսօր իրանց ձեռքը գցել օսմանեան օգոստափառ խալիֆատը, օսմանեան սուլթանութիւնը։

Ամէն մի բարի մահմեդականի սրբազան պարտքն է պաշտպանել մեր վտանգված հաւատի կենտրոնը, որի վրա սեւեռված են 400 միլիոն հաւատացեալների հայեացքները։

Այո, սրբազան պատերազմը այսօրվանից մեր սրբազան պարտքն է։ Աստուած այդ կամենում է, որովհետև մեզ շրջապատող թշնամիների ակներև նպատակն է ջնջել իսլամութիւնը և օսմանցիութիւնը, ստրկացնել իսլամի հետեւողներին։

Եթէ բոլոր մուսուլմանները չը շտապեն այսօր դիմել «Ջահադին», նրանք պէտք է պատրաստ լինեն ենթարկվելու վաղն անդարմանելի տառապանքներին։

Անողոք կռւելու՝ անհրաժեշտութիւնը մեզ համար, քանի որ երկրիս վրա կը մնայ մի մահմեդական և մի օսմանցի, ակներև է։ Ամբողջ ազգը հրաւիրված է սրբազան պատերազմի, որ նա պէտք է մղէ իր ամբողջ ուժով, իր ինչքով, Աստուծու և հայրենասիրութեան գծված ուղիով։

Միայնակ Ռումէլիան չէ կռւախնձորը։ Թշնամու ագահ հայեացքները ուղղված են մեր սրբազան երկրի վրա։ Եթէ մենք դանդաղենք մեր կեանքը և ինչքը զոհել մեր ազգային մեծութեան, մեր պատւի, մեր կրօնի պաշտպանութեան համար, մենք անգթօրէն դատապարտված կը լինենք թէ այս և թէ այն աշխարհում։

Ինչի՞ ենք սպասում մենք։ Ներկայ րոպէում իւրաքանչիւր առողջ անձի պարտաւորութիւնն է դիմել զէնքի, պաշտպանել

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԺԱՌԱՆԳԱԿԱՆՈՒԹԻՒՆ

III *)

Հօր ազդեցութիւնը միայն նրա բեղմնաւորած մի ձուիկի վրա չէ երեւում կամ արտայայտվում։

Փաստեր կան, որ ցոյց են տալիս, թէ աւելի ուշ, օրինակ՝ հօր մահից յետոյ էլ—երբ կինը արդէն ուրիշի ամուսին է—ծնվածները մի քանի յատկանիշներով նմանվում են կամ յիշեցնում ընտանիքի առաջին ամուսնուն։

Այստեղ, ինչպէս գիտութեան մէջ ընդունված է ասել, տեղի է ունեցել մօր վրա գործադրված խոր տպաւորութեան ազդեցութիւնը։

Անասնաբոյծներին լաւ յայտնի է, որ եթէ մի էգ շուն առաջին անգամ մի տարբեր տեսակի շնից է եղել սերված, նա՝ հետեւեալ երկու անգամ լինելով բեղմնաւորված հէնց իր տեսակի շնից՝ կարող է այնու ամենայնիւ ծնունդ տալ այնպիսի փոքրիկների, որոնք իրանց յատկանիշներով կը նմանվեն առաջին հօրը։

Յիշատակված են այսպիսի դէպքեր։ Սպիտակամորթ կանայք սևամորթից երեխայ ունենալուց յետոյ կենակցել են սպիտակամորթի հետ, և այնու ամենայնիւ այս վերջինից ծնունդ ստացած երեխաները իրանց մարմնի վրա ունեցել են մի քանի սեւագոյն բծեր։

Լինգար գիտնականը պատմում է մի ընտանիքի մասին, որի արուները վեց սերունդից ի վեր բոլորն էլ ստորավարոցածակ (հիպօսպադ) են եղել։ Դրանցից մինը ամուսնանում է և ունենում է 3 տղայ երեխայ՝ նմանապէս ստորավարոցածակ։ Նրա մահից յետոյ՝ նրա կինը ամուսնանում է այդ թերութիւնից բոլորովին ազատ մի մարդու հետ։ Սրանից այդ կինը ունենում է 4 տղայ, որոնք բոլորն էլ այնու ամենայնիւ ստորավարոցածակ են լինում։ Իսկ այս յիշածս վերջին չորսից ծնունդ են առնում 11 տղայ երեխայ, որոնցից միայն մինն է ստորավարոցածակ լինում։

Այստեղ մենք տեսնում ենք, որ թերածնութիւնը կամ վատակազմութիւնը թէև անցել էր մի քանի սերունդների միջև շնորհիւ մօր վրա գործադրված տպաւորութեան ազդեցութեանը, բայց նա (թերածնութիւնը) երկար չէր կարողացել պահպանել իր գոյութիւնը, որովհետև յետագայ սերունդները ուղղվել էին առողջակազմ և կատարելակազմ հօր միջնորդութեան շնորհիւ։

Այս փաստերը այնքան հրաշալի էին երեւացել, որ մի քանի հեղինակներ, չը կարողանալով դրանց բացատրութիւնը տալ, աւելի նպատակայարմար էին գտել դրանց գոյութիւնը հերքել։ Սակայն գիտութեան մէջ նման հետաքրքրական հարցեր երկար ժամանակ չեն կարող մնալ մթութեան մէջ անբացատրելի։ Ուստի և յետագայ գիտնականները փորձեցին պարզել այս հրաշանման դէպքերի կամ իրականացած փաստերի գոյութեան պատճառները։

Երեւան եկան զանազան տեսութիւններ։

Ըստ մի շարք գիտնականների՝ առաջին բեղմնաւորութեան ժամանակ կարող էր տեղի ունենալ սերմնարանի մէջ դեռեւս ամփոփված մի քանի ձուիկների անկատար մի բեղմնաւորում։

Ըստ ուրիշ գիտնականների՝ ձուիկը թէև կատարելապէս բեղմնաւորված է եղել, բայց սպասում է եղել աւել աջող պայմանների, որ սկսէ իր գոյութեան զարգացումը։

Յիշածս ենթադրութիւնները կարծես թէ արհեստական յենակէտների վրա հիմնված լինեն և ոչ թէ ակնյայտնի փաստերի վրա։

Ուստի և աւելի ճիշդ է երեւում այն ենթադրութիւնը, թէ սաղմը կարող է որոշ տպաւորումներ անել մօր վրա։ Եւ յիրաւի սաղմը իր հօրից ժառանգում է որոշ յատկութիւններ։

Սաղմի խորշիկները արուից ստացել են մի անձնական և գործավարական յայտնի ուղղութիւն, մի դրդիչ ուժ։ Այս վերջինիս շնորհիւ տածինի (պլացենտա) մէջ կատարվում են զանազան փոփոխութիւններ։ Այս փոփոխութիւնների հետեւանք լինում են զանազան արտադրութիւններ, որոնք անշուշտ և գործում են մօր վրա իրանց յատուկ ազդեցութիւնը, որը և տրամադրում է մօրը իր արգանդի մէջ ամփոփված աճող երեխային տալ իրան բեղմնաւորող էակին նման ընդունակութիւններ կամ հակումներ, ուրեմն թէ արտաքին, թէ ներքին նմանողութիւն։

Փակագծերի մէջ յիշեմ, որ սիֆիլիսի ուսումնասիրութիւնը մեծ զարկ է տուել տպաւորման հարցի արծարծմանը և մշակմանը։

Բոլոր ստացական յատկութիւնները, լինելով այսպէս ամրացած ժառանգականութեան կողմից, շարունակվում են, յարատեւում մի անընդհատ կերպով, մինչև որ առանց որեւէ նշմարելի կամ շօշափելի պատճառի յանկարծ երեւան է գալիս մի յատկանիշ, վաղուց փոփոխված կամ վաղուց անյայտացած։

Այս երեւոյթը անուանվում է արհաւութիւն (ատավիզմ)։

Բժ. Արտաշէս Շիրեան

---

*) Տես «Մշակ» № 104 (1912 թ.)։

ՔԵԱՄԻԼ-ՓԱՇԱՅԻ ԿԱԲԻՆԷՏԻ ԱՆԿՄԱՆ ՄԱՆՐԱՄԱՍՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ

(Ըստ Գաբ. Նորատունկեանի)

—

«Մաթէնի» խմբագրապետ Մ. Սթէֆան Լօզան հետեւեալ կերպով կը պատմէ Նիսի մէջ Գաբրիէլ էֆ. Նորատունկեանի հետ իր ունեցած մէկ շահեկան խօսակցութիւնը։

Թիւրքիոյ պատմութեան եղերական ժամերէն մէկը ապրեցայ դարձեալ, Սիմիէզի՝ նարնջենիներով և միմօզաներով պճնազարդուած զարատափին վրայ՝ Գաբրիէլ էֆ. Նորատունկեանի հետ։ Ամէն մարդ կը յիշէ, թէ Նորատունկեան Գաբրիէլ էֆէնդի Թիւրքիոյ արտաքին գործերու մինիստրն էր՝ պատերազմին հրատարակութեան, ինչպէս նաև յունվար 23-ի խռովութեան օրերուն։ Այսօր Գաբրիէլ էֆէնդի մեր հիւրն է—իր երկրին աննախընթաց ձախողութիւններէն արտաքին նիւթ մը, որ յարգանքի եւ համակրանքի արժանի է։

— Կը զգայի փոթորիկին մերձեցումը,—ըսաւ երէկի մինիստրը,—և յաճախ այդ մասին խօսած եմ դեսպաններուն, կանխատեսելով պատահելիքը։ Անոնց յայտարարեցի, որ Եւրոպա եթէ Թիւրքիայէն պահանջէ, որ դեռ չգրաւուած քաղաքէ մը հրաժարի՝ մեզի վտանգի ենթարկած կըլլայ։ Բայց դեսպանները ուսերնին կը թոթուէին... կը կարծէին, թէ Թիւրքերէն աւելի լաւ իրենք կը ճանչնան Թիւրքիան։ «Բան մը չպիտի պատահի» կըսէին։ Արդարև բան մը չպատահեցաւ, բացի սպանութենէ, յեղափոխութենէ մը և թշնամութեանց վերսկսումէն։

Գաբրիէլ էֆ. իր յուզիկ և հանդարտ ձայնով կը պատմէ երկու պատմական օրերը՝ մեծ դիւանին հաւաքման և Նազըմ փաշայի սպանութեան օրերը։

«Յունուար 22-ին դիւանը գումարուեցաւ։ Հրաւիրեալ 110 անդամներէն 90-ը պատասխանեցին։ Բոլոր ծերակուտականները, ինչպէս նաև այսօրուան արտաքին գործերու մինիստր իշխան Սայիդ-Հալիմ ներկայ էին։ Արդի վարչապետ Մահմուդ Շէվքէթ փաշա թէև հրաւիրուած էր, բայց յայտնած էր, թէ չպիտի կրնայ եղած հրաւէրին պատասխանել։ Քեամիլ-փաշա խօսք առաւ և ըսաւ, թէ դիւանը բացարձակ ազատութիւն ունի իր կարծիքը յայտնելու։

«— Բանէ մը մի՛ վախնաք,—ըսաւ,—և ձեր կարծիքը յայտնեցէք։ Պատասխանատուութիւնը մեր վրայ պիտի իյնայ և մենք պիտի ըլլանք պատասխանատուն ազգին և կրօնը և վտանգված ազգութիւնը։

Բրուսայի քաջ զաւակները ըմբռնեցին կորուստի մեծութիւնը։ Ամբողջ երկիրը մի մարդու պէս պէտք է ոտի կանգնի պատրաստ լինելու համար. ահա այդ նպատակով են կազմված ազգային պաշտպանութեան կոմիտէները։

Պէտք է համախմբել մեր ամբողջ ազգը մեր փառաւոր դրօշակի տակ խալիֆութեան և օսմանցիութեան իրաւունքները պաշտպանելու համար։ Եթէ, Աստուած մի արասցէ, մենք անփոյթ գտնվենք այդ նպատակը իրագործելու համար, այլ ևս չենք լսի մեր մինարէթների վրա աղօթքի հրաւիրելու կոչը։ Մենք կը տեսնենք մեր դուստրներին պղծված և սրի անցված թշնամիների ձեռքով։ Մեր մազերը բիզ-բիզ են կանգնում իսլամի անմեղ արիւնը տեսնելիս, որ կարմրեցրել է Րումէլիայի երկիրը։

Բռնութիւնները, որոնց զոհ են մեր ցեղակից և կրօնակից եղբայրները Րումէլիայում, կը կատարվին նոյնպէս Անատոլիայում։ Մենք հրաւիրում ենք նրանց բոլորին, որոնք համոզված են այս տխուր ճշմարտութիւնների մէջ, հայրենասիրական գործ կատարել։ Մենք նրանց հրաւիրում ենք Ամենաբարձրեալի ցանկացած սրբազան պատերազմի. մենք նրանց հրաւիրում ենք կրօնի դրօշակի ներքոյ։

Մենք մի այնպիսի վայրկեանի մէջ ենք գտնվում, երբ իւրաքանչիւրը պէտք է աշխատէ իր ամբողջ ոյժերով, իր բոլոր ինչքով։ Մենք կարծես դատաստանի ժամին գտնվելիս լինենք։ Այն բոլոր մահմեդականները, որոնց սիրտը բաբախեցնել են տալիս սէրը դէպի կրօնը և հայրենասիրութիւնը, պէտք է զէնքի դիմեն։

Իւրաքանչիւրը պէտք է դիմի զինուորական կլուբը։

Մեր կամաւորները կօմպակտ խմբերով պէտք է գնան սրբազան պատերազմի։

Մենք չենք կասկածում, որ Բրուսայի բնակիչները, որոնք միշտ առաջիններն են հանդիսացել հայրենիքի փրկութեան գործում, այս անգամ ևս առաջին շարքերում կը գտնվեն այն դէպքերում, երբ պէտք է պաշտպանել մեր կրօնը։

Այդպէս է Նախախնամութեան ցանկութիւնը, որ մենք ձեզ հաղորդում ենք Շէրիի հրամանագրված լեզուով։

Օն անդրբրուսացիներ։

Ի զէն. ջէհաթը մի անպայման անհրաժեշտութիւն է։ Թող Ամենաբարձրեալը իր հովանաւորութիւնը տարածէ խալիֆայի և օսմանեան սուլթանութեան վրա և նրանց աւելի մեծ և աւելի փառաւոր դարձնէ։

Բրուսայի մուֆտի՝ Նումէր Բեամիլ

ՌՈՒՍ-ԱՒՍՏՐԻԱԿԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԱՌԻԹՈՎ

Վարշավա, 17 փետրվարի

Չը նայելով որ Աւստրօ-Ունգարիայի և Ռուսաստանի միջև դեռ կատարեալ համաձայնութիւն չէ հաստատվել, այսու ամենայնիւ աւստրիական կիսապաշտօնական աղբիւրներից տեղեկանում ենք, որ մօտ օրերս պիտի սկսեն արձակել իրանց պահեստի զինուորներին՝ Ռուսաստանի սահմանին մօտ գտնվող գնդերից։ Ինչպէս յայտնի է՝ մօտ մի շաբաթվայ ընդմիջումից յետոյ նորերս վերսկսվեցին Լօնդօնի դեսպանաժողովի նիստերը՝ ալբանական խնդիրը քննելու համար։ Այսպիսով աւստրօ-ռուսական ընդհարումն այլ ևս նախկին սուր բնոյթը չունի։ Վիէննայում, ինչպէս և Պետերբուրգում, այժմ համոզված են, որ այլ ևս պատերազմի երկիւղ չը կայ։ Դեռ ես շարունակվում է դիւանագիտական պայքարը, բայց երկու կողմերից որն էլ որ յաղթի կամ յաղթվի, թէ յաղթութիւն և թէ պարտութիւն տեղի կունենան խաղաղ կերպով, առանց արիւնհեղութեան։

Դիւանագիտական շրջաններին ներկայիս խիստ զբաղեցնող խնդիր է՝ Պետերբուրգում մօտերս կայանալիք դեսպանաժողովը՝ բուլղար-ռումինական վէճի առիթով։ Հաւանական է, որ Լօնդօնի դեսպանաժողովը սրան յանձնի և ալբանական խնդրի վերջնական լուծումը։

Նայած տեղեկութիւններին՝ ռուսական դիւանագիտութիւնը համաձայնվել է, որ Սկիւտարն անցնի Ալբանիային, եթէ միայն կարճ ժամանակում չերնօգորցիներին չաջողեց նրան տիրապետել։ Իսկ եթէ կամ Սկիւտարն և կամ Ադրիանուպոլիսը անձնատուր լինեն նախ քան վերջնականապէս ձևակերպվելը բանակցութիւնների՝ Ռուսաստանի և Աւստրօ-Ունգարիայի կամ Թիւրքիայի ու դաշնակիցների միջև, այն դէպքում բոլոր եղած պայմանները հիմնական փոփոխութեան կենթարկվեն, և դիւանագիտական Սիզիֆին կը մնայ նորից դէպի վեր հրել «հաշտութիւն» անուանեալ ծանր բեռը։

Երեք կայսրութիւնների դաշնակցութեան սառեցման հաւանականութիւնը Ֆրանսիայում նկատվում է իբրև մի մեծ վտանգ, որ սպառնում է իրականանալ մօտիկ ապագայում. Պարիզում ուրախ կը լինէին տեսնել ռուս-աւստրիական համաձայնութիւնը՝ իբր սկիզբ Աւստրիայի անջատման եռապետեան դաշնակցութիւնից և նրա մերձեցման եռապետեան համաձայնութեան։ Սակայն երկիւղ կայ, որ մի գուցէ ռուս-աւստրիական համաձայնութեան հետևանք լինի Ռուսաստանի անջատումն եռապետեան համաձայնութիւնից և մերձեցումն եռապետեան դաշնակցութեան։ Ֆրանսիացիք մեծ յոյս ունեն իրանց նոր դեսպան Դելկասսէի վրա, որ յայտնի է իբր թունդ կողմնակից եռապետեան համաձայնութեան և հակառակորդ Գերմանիայի ազդեցութեան։

Մ. Ե.

ՎՈՍՓՈՐԻ ԱՓԵՐԷՆ

Կ. Պօլիս, 15 փետրուար

Ազգային վարչական տագնապի մը առաջին օրերուն մէջ կապրինք։ Շատ հաւանական է, որ Արշարունի պատրիարք և իրեն գործակից խառնածին վարչութիւնը տապալին։

Ազգ. ժողովի մէջ ընդհանուր կերպով մը տրամադրութիւնները հետզհետէ կը լարուին Արշարունի պատրիարքի դէմ, որ արդարև չկրցաւ մնալ պատրիարքէ մը պահանջուած բարձրութեան վրայ։

Մասնաւորապէս դիտելի է, որ իր ընտրողներն են, որ իրեն դէմ դարձած են և դժգոհ են իր գործելու եղանակէն։

Արշարունի պատրիարք աթոռին հրապոյրներէն շլացած՝ եղէգի մը ճկունութիւնը ստացած է և ամեն հոսանքի առջև խոնարհելու տրամադիր դարձած է։

Մասնաւորապէս իր գործերու ընթացքին անհետևողականութեան ու անկենցաղագիտական ինչ ինչ վերաբերումները՝ ընդհանուր կերպով դժգոհութեան առիթներ կը ստեղծեն, և շատեր առանց նկատելու ժամանակին փափկութիւնը նոյնիսկ անմիջական կերպով պատրիարքական տագնապ մը յարուցանելու կողմը կը հակին։ Այս հոսանքը մինչև հիմա հանդիսաւորապէս պիտի արտայայտած ըլլար իր դժգոհութիւնը, եթէ երեսփոխանաց խումբ մը և վարչութիւնը մասնաւորապէս՝ այս տեսակ տագնապ մը յարուցանել անպատեհ և վնասակար չյայտարարէին։

Վարչութիւնը, մանաւանդ անոր քաղաքական ճիւղը, երբ կը հակառակի պատրիարքական խնդիր յարուցանելու, պատճառը ուրիշ բան չէ, եթէ ոչ սա, որ Արշարունի պատրիարք վարչութեան համար իդէալ պատրիարք մըն է։

Բոլոր վարչութիւնները փափաքող չեն զօրաւոր ու ազդեցիկ պատրիարք մը ունենալու իբր նախագահ։ Պատրիարքներն ալ, փոխադարձաբար, երբ իրենք հեղինակութիւն մը ու ուժ մը կը ներկայացնեն, շատ չեն սիրեր զօրաւոր վարչութիւններ, որոնք կրնան զիրենք չէզոքացնել և անոնց ամեն մէկ քայլը հաշուի առնել։

Արշարունի պատրիարք մեղրամոմէ արձան մըն է, որ կրնայ ամեն կաղապար ստանալ։ Վարչութիւնը զայն իր ուզած ձևով գործածելու համար խորապէս գոհ է և, գիտնալով հանդերձ անոր թերութիւնները, կուզէ որ անիկա աթոռին գամուած մնայ։

Սակայն վարչութեան դիրքն ալ շատ ամուր չըլլալով՝ նշաններ կան, թէ պատրիարք և վարչութիւն թև-թևի պիտի մեկնին պատրիարքարանէ։

Ազգային շրջանակի մէջ «Թիւ 17 խաֆիյէի» խնդիրը յուզուած ատեն, գրեթէ ամեն մարդ իրարու ականջին փսփսալ սկսաւ և կասկածներ յայտնեց վարչութեան զանազան անդամներուն վրայ։

Այս կասկածները ցոյց կուտային, թէ վարչութիւնը իր ամբողջութեան մէջ չէր վայելեր ազգային վստահութիւնը, և կային անոր մէջ այնպիսի տիպեր, որոնց նոյն իսկ կը համարձակէին շատեր վերագրել լրտեսութեան ստոր և գազրելի պաշտօնը։

Հետևաբար այս տեսակ վարչութիւն մը ինքը կը կարօտի յենարանի մը և չէր կրնար իբր նեցուկ ծառայել պատրիարքին։

Վարչութիւնը ի վերջոյ պիտի պատրաստուի լքանել պատրիարքը, որ կրնայ զինքն ալ միասին քշել տանիլ։

Սակայն դժբաղդաբար մէկ քանի օրէ ի վեր կացութիւնը վարչութեան նկատմամբ շատ աննպաստ երևոյթ մը առաւ։

Ինչպէս արդէն գրած եմ, վարչութիւնը իր մէջէն կարգած էր լիազօր մարմին մը «Ապահովութեան յանձնաժողով» անունով, որ կը զբաղէր հարստահարական խնդիրներով։

Ազգ. ժողովի կողմէ կարգուած խորհրդարանական յանձնաժողովի մը վստահուած մէկ գործը վարչութիւնը ինքն ստանձնելով՝ ազգ. ժողովին առջև եկաւ պահանջելու այդ յանձնաժողովին լուծումը «ամեն պատասխանատուութիւն» ինքն ստանձնելու յօժարակամութեամբ։

Ազգ. ժողովը, վստահութեան ցոյց մը ըրած ըլլալու և վարչութիւնը զօրացնելու համար, համակերպեցաւ վարչութեան այս առաջարկին և լուծեց այդ յանձնաժողովը։

Այն օրէն այսօր վարչութիւնը կը գործէր ինքնագլուխ։

Սակայն իր գործունէութեան դէմ սկսան դժգոհութիւններ երևան գալ։ Մասնաւորապէս իր գործած քանի մը ինտրիգները շատ տխուր ազդեցութիւն գործեցին։ Լսուեցաւ, որ սխալներ գործուած են։ Լսուեցաւ, որ դեսպանատան մը կողմէ գրաւոր տեղեկութիւն մը ուղղուած էր և պատասխանը փոխանակ անմիջապէս արուելու՝ ամիսներ յետոյ տրուած էր, երբ արդէն շատերը իմացած և նոյն իսկ լրագրական հրապարակ հանած էին։

Ասոնց լրումը եղաւ «Թիւ 17 խաֆիյէի» յայտնութիւնը, որ անծանօթ չէր «Ապահովութեան յանձնաժողովին», սակայն խնամով ծածկուած էր վարչութեան անդամներէն։

Այս իրողութիւնները պարտաւորեցին վարչութիւնը, որ ինքնաբերաբար կոչում ընէր ազգ. ժողովին, անոր խմբակցութիւններէն կարգուած յանձնաժողովի մը առջև պարզելու համար իրենց ուղղութիւնը և ծրագիրը։

Արդարև կատարուեցաւ այդ մասնաւոր համարատուութիւնը, որուն արդիւնքը կերևայ թէ նպաստաւոր չէ վարչութեան։ Փոխանակ այդ ներկայացուցիչները իրենց գոհունակութիւնը յայտնելով մէկ կողմ քաշուելու՝ ընդհակառակը տուին տարօրինակ որոշում մը։

Անոնք որոշեցին առաջարկել վարչութեան կարգել խորհրդարանական յանձնաժողով մը, որուն պաշտօնը պիտի ըլլայ օժանդակել վարչութեան խորհրդակցական հանգամանքով և հակակշռել անոր գործերը։

Վարչութիւնը այս տարօրինակ առաջարկին առջև, որ անպաշտօն մարմինէ մը կուգար, յանկարծակիի եկաւ։

Անիկա անվստահութեան մը նշանը կրնայ համարուիլ, որ անպաշտօն խումբ մը երեսփոխաններ ցոյց կուտային հանդէպ վարչութեան։

Վարչութիւնը յատուկ պատգամաւորի մը ձեռքով ներկայացած այս առաջարկին առջև եթէ տեղի տար, պիտի հաւատացած ըլլար, որ եթէ մերժէր, կրնար իր տապալումին պատճառ տուած ըլլալ, ուստի ռազմական ճարտարութեան մը ապաւինեցաւ և վտանգը առժամապէս անհետացնելու համար առաջարկեց, որ նախ խմբակցութիւնները արտայայտուին ի նպաստ կամ ընդդէմ իր գործունէութեան և յետոյ բերեն իրենց առաջարկը։

Հիմա անելի մը մէջ են թէ վարչութիւնը և թէ այդ երեսփոխանական խմբակցութեանց ներկայացուցիչները, վասնզի եթէ այս վերջինները արտայայտուին ի նպաստ վարչութեան, այն ատեն վարչութիւնը իրաւունք պիտի ունենայ ըսելու, թէ «ալ ինչ հարկ ուրիշ մեզի օժանդակներ և խորհրդակիցներ տալու։ Մենք լաւ գործեր ենք մինչև հիմա, թողէք որ շարունակենք մեր սկսած գործը այնքան լաւ, որքան մինչև հիմա գործեր էինք»։

Եթէ չհաւանին վարչութեան գործին և դժգոհութիւն ցոյց տան, այն ատեն վարչութեան չի մնար ընել ուրիշ բան, եթէ ոչ խնդիրը բերել ազգային ժողովին, և եթէ ան ալ համամիտ ըլլայ խմբակցութեանց ներկայացուցիչներու կարծիքին, հրաժարիլ իբր անվստահութեան քուէ ստացած վարչութիւն մը։ Եւ որովհետև վարչական տագնապ չյարուցանել որոշուած է, կըսուի, խմբակցութեանց ներկայացուցիչներն ոչ պիտի կարենան գոհունակութիւն յայտնել և ոչ ալ դժգոհութիւն։

Վարչութիւնն ալ ոչ վստահութիւն պիտի ստացած ըլլայ և ոչ ալ պարսաւ։ Հետևաբար խնդիրը կրնայ պահ մը մնալ առկախ, սակայն ուշ կամ կանուխ անպատճառ փոթորիկ մը պիտի պայթի։

Շատ մը երեսփոխաններ կը ջանան համոզել, որ անվստահութեան խնդիր չկայ, սակայն վարչութիւնը տակաւին չէ համոզուած և կըսուի թէ կը պնդէ իր տեսակէտին վրայ։

Եթէ մինչև վերջը մնայ այս տեսակէտին վրայ, տագնապը անխուսափելի է, վասնզի խմբակցութիւններն ալ կըսուի թէ անդառնալիօրէն որոշած են վարչութեան քայլերը հակակշիռի տակ առնել։

Տեսնենք թէ խնդիրը ուր պիտի յանգի։

Շաաւլ

ՌՕՄԱՆՕՎՆԵՐԻ ՏԱՆ 300-ԱՄԵԱԿԻ ՅՈԲԵԼԵԱՆԸ ԹԱՒՐԻԶՈՒՄ

Թաւրիզ, 21 փետրվարի

Երէկ սկսվեց տօնակատարութեան կրօնական մասը. ռուսաց հիւպատոսարանի եկեղեցում և Բաղը-Շումալում կատարվեց հոգեհանգիստ Ռօմանօվների Տան հանգուցեալների յիշատակին։ Իսկ այսօր տեղի ունեցան զօրահանդէս և պաշտօնական այցելութիւնք թնդանօթների գոռոցներով։ Ամբողջ Թաւրիզը զարդարված է ռուսաց և պարսից դրօշակներով. փակ են բոլոր պաշտօնատուները։

Հայ հասարակութիւնը նմանապէս ցոյց տուեց ցանկալի մասնակցութիւն 300-ամեայ յօբելեանին։ Ատրպատականի Թեմական Ներսէս վարդ. Մելիք-Թանգեանի մի շաբաթ առաջ տարածած յայտարարութեան համաձայն՝ երէկ Ղալայի ս. Աստուածածին եկեղեցում կատարվեց հանդիսաւոր հոգեհանգիստ հասարակութեան ներկայութեամբ, ուր հիւպատոսարանի կողմից ներկայ էր հետագրական պաշտօնեայ պ. Վարդանեան, ըստ որում հ. Մելիք-Թանգեան հայերի մասնակցութեան և կատարվելիք արարողութիւնների մասին մի գրութեամբ յայտնել էր հիւպատոսին։

Այսօր նոյն եկեղեցում տեղի ունեցաւ հանդիսաւոր պատարագ և պատարագից յետոյ Կայսերական մաղթանք և ասուր պատաշաճի քարոզ, խուռն բազմութեան ներկայութեամբ. ներկայ էին նաև ռուսաց հիւպատոսարանի աւագ քարտուղար Վեդենսկի, մի այլ պաշտօնեայ և հետագրէն Վարդանեան։

Հ. Մելիք-Թանգեանի քարոզը նուիրված էր Ռօմանօվների Տան ծագման՝ սկսած Միխայիլ Ֆէօդօրովիչից մինչև Նորին Կայսերական Մեծութիւն Նիկօլայ II։ Հայր-սուրբը իր քարոզում սեղմ և գեղեցիկ կերպով պատկերացրեց Ռօմանօվների Տան հանգուցեալ ներկայացուցիչների յարաբերութիւնները հայերի հետ, հայերի վրա ունեցած հայրական հոգածութիւնները և արևելեան քրիստոնեաների վերաբերութեամբ ընդհանրապէս ի գործ դրած բարձր և մարդասիրական հովանաւորութիւնը։

Յետ աւարտման եկեղեցու՝ առաջնորդ Մելիք-Թանգեան Կովկասի փոխարքային ուղարկեց հետևեալ հեռագիրը.

«Ռօմանօվների Տան յօբելեանի առիթով երէկ հայոց եկեղեցում կատարվեց հոգեհանգիստ։ Այսօր Թաւրիզի հայ հասարակութեան խուռն բազմութեան ներկայութեամբ կատարվեց հանդիսաւոր պատարագ, յետոյ մաղթանք Թագաւոր Կայսրի և ամբողջ Թագաւորական Տան առողջութեան համար։ Խնդրում եմ, ձերդ պայծառափայլութիւն, չը մերժել բարեհաճել արկանել առ ոտս Նորին Կայսերական Մեծութեան Ատրպատականի հայերի անսահման երախտագիտութեան զգացմունքները այն բարձր հովանաւորութեան համար, որ սփռվում է Արևելքի ճնշված քրիստոնեաների վրա։ Առաջնորդ Ատրպատականի հայոց Ներսէս վարդապետ»։

Հայկազուն

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՅՈՑ ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՄԷՋ

Շաբաթ, փետրվարի 23-ին, ի պատիւ Ռօմանօվների Տան 300-ամեայ յօբելեանի, կայացաւ Հայոց Ազգագրական Ընկ. հրապարակային նիստը։ Հանդիսականները ի պատիւ Ռօմանօվների Արքայական Տան ոտքի կանգնելուց յետոյ՝ լսեցին Լէօի դասախօսութիւնը հայերի՝ Ռօմանօվների Տան հետ ունեցած յարաբերութիւնների մասին։

պատմութեան առջև։ Ձեզմէ միայն խորհուրդ մը կուզենք. պէտք է որ պետութեանց տուած խորհուրդին անսանք թէ թշնամութիւնները շարունակենք։

«Մինիստրները երկրին վիճակը պարզեցին, և քուէարկութիւն կատարելով՝ ներկայ 90 հոգիէն 1-ը միայն, վճռաբեկ ատեանի ընդհ. դատախազը, հակառակ քուէ տուաւ. միւս բոլորը հաւանեցան, որ թըշնամութիւնները շարունակելէ ետ կենանք։

«Յաջորդ օրը,—ըսաւ Նորատունկեան էֆէնդի,—առտուան ժամը 11-ին, Բ. Դուռ պիտի հաւաքուէինք՝ Եւրոպայի տալիք մեր պատասխանը բանաձևելու համար։ Ժամանակ շահելու համար, որոշուած էր, որ ես այդ պատասխանը ֆրանսերէն խմբագրէի և մինիստրներու խորհուրդին բերէի, վիճաբանութիւն կատարելու համար։ Ժամը 11-ին, այն պահուն, որ կը պատրաստուէի տունէս մեկնիլ, իտալական դեսպան Գարրոնի մարկիզը եկաւ։ Ներում խնդրեցի, որ չպիտի կրնամ զինքը ընդունիլ, որովհետև մինիստրներու խորհուրդը ինծի կը սպասէր։

«— Իմ ավտոմօբիլովս կերթաք Բ. Դուռ և այսպիսով ժամանակ կորսնցուցած չէք ըլլար,—ըսաւ դեսպանը։

«Եւ զարմանալի բան. իտալական դեսպանի ավտոմօբիլով Բ. Դուռ գացի իբր արտաքին գործերու մինիստր, վերջին անգամ ըլլալով։ Երբ Բ. Դուռ հասայ՝ բացարձակ հանդարտութիւն կը տիրէր ներսը և դուրսը։ Պաշտօնակիցներս բոլորը հաւաքուած էին։ Վիճաբանութիւնները սկսան ֆրանսերէն լեզուով, որովհետև իմ պատրաստած պատասխան-ծանուցագիրս ֆրանսերէն խմբագրած էի։ Սակայն չէյխ-իւլ-իսլամը շատ լաւ տեղեակ չըլլալով այդ լեզուին բացատրութիւններ պահանջեց, և հարկ եղաւ պատասխանը թիւրքերէն թարգմանել։ Այս պատճառաւ նիստը երկարեցաւ. և որովհետև կէսօրը անցած էր կէս ժամ, որոշեցինք բոլորս Բ. Դռան մէջ ճաշել։ Ըստ սովորութեան, ճաշը սուլթանին կողմէ կը տրուէր»։

Այս ճաշին միջոցին, որ արիւնով պիտի վերջանար, Գաբրիէլ էֆէնդի Նազըմ-փաշայի քովը նստած էր։ Նազըմ-փաշա երբեք այնչափ զուարթ և հանդարտ եղած չէր, որչափ այդ օրը։ Քանի մը օր առաջ՝ ներքին գործերու իր պաշտօնակիցը յայտնած ըլլալով, թէ Էնվէր-բէյ դաւադրութիւն կընէ, պատերազմական մինիստրը գրեթէ բարկացեր էր։

— Պատուոյ խօսք տուած է ինծի, թէ քաղաքականութեամբ չպիտի զբաղի,—պոռացեր էր Նազըմ-փաշա,—այդ խօսքը կը բաւէ, և ոչ ոք պէտք է կասկածի այդ մասին։

Նոյն ատեն իսկ կը կատակաբանէր ուրախ կերպով Գաբրիէլ էֆէնդիի հետ, որ անոր լաւ ախորժակին համար զայն կը շնորհաւորէր։

— Վաղը ինծի հետ պիտի ճաշէք, և ձեզ պիտի սորվեցնեմ ինծի չափ ախորժակ ունենալու գաղտնիքը։

Անատոլուի մէջ ճամբորդութեան մը ծրագիրը կը պատրաստէր։

— Ինծի հետ պիտի գաք, և որովհետև ցուրտէն չէք սիրեր, ձեզ համար մասնաւորապէս գաղջ օդ մը պիտի յանձնարարեմ,—կըսէր։

Ճաշը վերջանալէն ետք, մինիստրները սեղանէն ելան և սկսան փոքր խումբերու բաժնուած խօսակցիլ իրարու հետ՝ խորհրդարանին մէջ։ Նորատունկեան էֆէնդի կրթական մինիստրին, իսկ Նազըմ-փաշա էվքաֆի մինիստրին հետ կը խօսէին. վարչապետ Քեամիլ-փաշա իր աշխատասենեակը անցաւ՝ այցելու մը ընդունելու համար։

Յանկարծ, գաւիթին մէջ հրացէնի երկու հարուածներ լսուեցան և հրմշտուքի մը խուլ աղմուկը ելաւ։

— Բ. Դռան առջև ցոյց կընեն,—ըսաւ մինիստր մը՝ առանց յուզուելու։

Նազըմ-փաշա, որ բազկաթոռի մը մէջ նստած էր, զսպանակէ մղուածի պէս, ոտքի ելաւ և մէկ ոստումով դէպի գաւիթ տանող դուռը ուղղուեցաւ։ Գաբրիէլ էֆէնդի բնազդաբար նետուեցաւ իր պայուսակին վրայ և պաշտօնաթուղթերը հաւաքելով մէջը դրաւ, զայն փակեց ու թևին տակ առաւ։ Ետոյ ուրիշ դուռնէ մը վազելով գնաց վարչապետին սենեակը։ Հոն էր Քեամիլ-փաշա, ճակատը ապակիին, դուրսը կը դիտէր։

— Վսեմապատիւ տէր,—կը պոռայ արտաքին գործերու մինիստրը,—պատուհանին մօտ մի՛ կենաք, ցոյց կըլլայ կոր դուրսը։

Հազիւ իր խօսքը աւարտած էր, երբ դուռը ուժգնօրէն կը բացուի և երկու հոգի, հրացէնը ձեռքերնին, սենեակ կը մըտնեն։

— Ի՞նչպէս կը համարձակիք.... Ի՞նչ կայ...

— Վսեմապատիւ տէր, ան կայ որ,—կըսէ ներս մտնողներէն մին, որ Էնվէր բէյն էր,—խռովութիւն մը ծագած է. բայց եթէ ձեր հրաժարականը տաք, կարգ կանոնը անմիջապէս պիտի վերահաստատուի. խօսք կուտամ։

Քեամիլ-փաշա՝ առանց յուզուելու, իր սովորական սկար ձայնով կը հարցնէ.

— Եւ եթէ հրաժարուելու ըլլամ, զիս կապահովցնէք, որ կաթիլ մը արիւն չպիտի թափուի։

— Խօսք կուտամ։

— Լաւ, ձգեցէք որ գրեմ։

Եւ հաստատ ձեռքով մը, վարչապետը իր հրաժարականը գրելով Էնվէր-բէյի կուտայ, որ զինուորական բարև մը ընելով դուրս կելլայ։

«— Այն ատեն,—ըսաւ Նորատունկեան էֆէնդի,—խորհեցայ որ պաշտօնակիցներուս մօտ երթալու էի։ Գաւիթէն անցայ, ուր մարդ չկար։ Ամենքը փախած էին, դռնապանները, քարտուղարները, պահակները։ Գաւիթին մէջտեղը կօնսօլ մը կայ, ուր այցելուները իրենց գլխարկը և գաւազանը կը դնեն։ Այդ կօնսօլին մօտ երբ հասայ, տեսայ որ գետինը մարդկային մարմին մը ինկած է։ Խորհեցայ որ օֆիցէր մը ըլլալու է, երբ յանկարծ ճանչցայ Նազըմ-փաշան։ Աչքերը սառած էին արդէն և իր ձեռքը, զոր բռնեցի, քար կտրած էր։ Ճակտին և քունքին վրայ երեք արիւնոտ ծակեր կային, ուրկէ արիւնը կը հոսէր։ Յանկարծակի ամեն ինչ պարզուեցաւ աչքիս։ Երբ Էնվէր-բէյ սենեակ մտած էր, դուրսը գաւթին մէջ հրացէնի նոր հարուածներ լսուած էին։ Նազըմ-փաշան էր որ կը սպաննէին։ Երբեք այդ պահը չպիտի մոռնամ մինչև մահս»։

Մնացեալը յայտնի է։ Բայց ժողովուրդը չի գիտեր թէ Նազըմ-փաշա, որուն ձեռքէն միլիոններ անցան, աղքատ մեռաւ, այնչափ աղքատ, որ ներկայ կառավարութիւնը իր որդոց թոշակ կապեց, բայց անոնք մերժեցին։ Նազըմ-փաշայի աղջիկներէն մէկը յիմարանալով մեռաւ, միւսը Ստամպօլի փողոցները կը թափառի, ողորմելի վիճակի մէջ։ Նազըմ-փաշայի որդին դեսպանատան մը քարտուղարն է և տակաւին նոյն պաշտօնին մէջ կը մնայ։ Նազըմ-փաշա՝ որ զինուորականի մը կողմէ սպաննուեցաւ՝ զինուորի մը սիրտն ու հոգին ունէր։

Նորատունկեան էֆ. յետոյ դրուագ մը պատմեց Նազըմ-փաշայի կեանքէն.

«Օր մը Նազըմ-փաշայի հետ Չաթալջայի առաջապահ դիրքերը գացած էինք զօրավար Սավօֆի և Դանէֆի հետ տեսակցելու համար։ Սաստիկ ցուրտ էր օդը։ Բոլորս վերարկուներ հագած էինք, մինակ Նազըմ-փաշա առանց վերարկուի կը քալէր։

«— Խենթ էք, փաշա,—ըսի իրեն,—ինչու վերարկունիդ չէք հագնիր։

«Նազըմ փաշա ցոյց տուաւ մեր անցքին վրայ կեցող օսմ. զինուորները և ըսաւ.

«— Անոնք սակայն, անոնք ալ վերարկու չունին. բայց խենթ չեն....»։

Խենթ չէին, այո, բայց գտնուեցաւ անոնց մէջ խենթ մը, որ սպաննեց Նազըմ-փաշան։

(«Ջահ»)

Դասախօսը՝ գծելով Մոսկովեան Թագաւորութեան աստիճանաբար զարգացումը Ռոմանօվների Տան գահիստնի ներքև՝ զուգընթացաբար առաջ բերեց հայ վաճառականութեան զարգացումը և այս առիթով ծագած առևտրական յարաբերութիւնները երկուսի միջև։ Շեշտելով հայ վաճառականների կատարած կուլտուրական և քաղաքական դերի վրա՝ Լէօն կանգ առաւ Իսրայէլ Օրիի՝ եւրօպական պետութիւններին արած դիմումների վրա և եզրակացրեց, որ Հայաստանի բարենորոգումը պէտք է յուսալ Ռուսաստանից, որ սահմանակից լինելով՝ անհրաժեշտօրէն ստիպված է զբաղվել հայկական խնդրով։ Այնուհետև մի առ մի թւեց այն պատմական մեծ դէպքերը, պատերազմները, գաղթականութիւնները, դաշնագրութիւնները, որ տեղի ունեցան այս Արքայական Տան Թագաւորութեան ընթացքում, և ապա՝ համեմատելով ռուսահայերի և Թիւրքահայերի տնտեսական, մտաւոր և բարոյական զարգացումը՝ բնորոշեց Ռոմանօվների Տան րէժիմի բարերար ազդեցութիւնը։

Դասախօսութիւնից յետոյ տեղի ունեցաւ զրոյց։ S. S.

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Նորութիւններ Սղնախից

Սղնախ, 16 փետրվարի

Սղնախի գաւառում աջողութեամբ գործում են մանր վարկի ընկերութիւնները, շատ գիւղերում բացված են բանկեր, որոնք կարճ ժամանակում շօշափելի շրջանառութիւն են կատարել։ Զուգաանի գիւղի բանկը ութ ամսում տոկոսներ է ստացել 531 ր. 19 կ., ծախսել է 230 ր. 81 կ., զուտ արդիւնք 1912 թ. ունեցել է 300 ր. 38 կ.։

Մարտ ամսին նշանակված է Սղնախի քաղաքային ինքնավարութեան ձայնաւորների ընտրութիւնը 1913—1917 քառամեակի համար։

Անցեալները Բօդբէ գիւղում մի 19 տարեկան վրացի օրիորդ հրացանով սպանեց իրան։ Օրիորդը սիրահարված է եղել մի չքաւոր երիտասարդի վրա, սակայն ծնողները չեն համաձայնվել ամուսնացնել նրա հետ և կամեցել են պսակել ուրիշի հետ, որի պատճառով վերջ տուեց իր կեանքին։ N. N.

ՅՈԲԵԼԵԱՆԱԿԱՆ ՕՐԵՐԸ ԳԱՒԱՌՈՒՄ

Բանանց գ. (Գանձակի գաւ.), 22 փետր.

Փետրվարի 20-ին և 21-ին Բանանցի ամբողջ հասարակութիւնը առանձին շուքով կատարեց Ռոմանօվների Տան 300-ամեայ յօբելեանը։ Գիւղը զարդարված էր դրօշակներով, գորգերով։ Ամբողջ օրը ղօղանջում էին եկեղեցու զանգերը։ Ժողովուրդը հաւաքվեց եկեղեցի, քահանան կատարեց մաղթանք։

Տանուտէր Յակոբեանցը հաւաքեց բոլոր հասարակութիւնը գիւղամէջ և այդ տեղից քահանայով, Թագաւորի և Թագուհու պատկերները բռնած և դրօշակները ձեռին սկսեցին պտտել գիւղի փողոցները։ Գիշերները փողոցները լուսաւորված էին։

Փետրվարի 21-ին մի քանի պարոններ ժողովրդի մէջ խօսեցին Ռոմանօվների Տան մեծ տօնի մասին։

Բանանցի հասարակութիւնը այսպիսի շքեղ տօն դեռ ևս չէր տեսել։

Վռամ. Եպիսկոպոսեան

—

Դիլիջան, 20 փետրվարի

Երէկ առաւօտեան ժամը 10-ից տեղիս հայոց եկեղեցին լի էր երկսեռ բազմութեամբ և ծխ. դպրոցի աշ.-աշակերտուհիներով, ուր և կատարվեց հանդիսաւոր հոգեհանգիստ և մաղթանք պատարագից յետոյ։

Ապա ներկայ հասարակութիւնը եկեղեցական թափօրով դիմեց դպրոց, ուր կազմակերպված էր ճոխ ծրագրով հանդէս ըստ աւուր պատշաճի։ Երգեցիկ խումբը աջող երգում էր ուսուցիչ Ար. Մկրտչեանի ղեկավարութեամբ։ Ներկայ հասարակութեանը աւ. ուսուցիչ Յար. Մելքումեանց թեթև կերպով ծանօթացրեց տօնի և նրա նշանակութեան հետ։ Հանդէսը վերջացաւ կէս օրին։ Ամբողջ գիւղը խինդ ու բերկրանքի մէջ էր, տները զարդարված էին եռագոյն դրօշակներով, երեկոյեան խոյտաճամուկ հրավառութիւնը, ասիական զուռնայի նուագածութիւնը կենդանութիւն էին տւել փողոցներում։

Երեկոյեան ժամը $7^1/_2$-ին սկսվեց ներկայացումը դպրոցի ընդարձակ դահլիճում, ուր, մանկավարժական կազմի ջանքերով, կառուցված է բեմ։ Սիրողների խումբը մեծ հաճոյք և հոգեկան բաւականութիւն պատճառեց հասարակութեան, խաղալով «Ժայռ» և «Նախ մեռան, ապա ամուսնացան» վօդէվիլը ի յիշատակ համապետական մեծ տօնի։ Ներկայացումն անցաւ աջող. դահլիճը լի էր։

Հասարակութեան, Փոխադարձ Խնայողական Ընկերութեան կողմից ուղարկվեցին ամենահպատակ զգացմունքների թարգման հեռագիրներ։ Աւեիր

ՏԵՂԵԿԱՏՈՒ ԶԱՆԳԵԶՈՒՐԻ

I

Գորիս, 15 փետրվարի

Ձմեռ, համատարած ձմեռ է։ Սար ու ձոր պատած ձիւնով, մեր յայտնի Ուչ-Թափան իր ուժեղ բուք-բորանով։ Գաւառամասերից երթևեկութիւնը դէպի Գորիս շատ դանդաղ և ծանր է կատարվում։ Գիւղական կեանքն ու շարժումը մեռած ու լռած է։ Կեանքը և մթերքները թանգ են։

Շուկայում ցորենի պուդը ծախվում է 1 ր. 50 կ.-ից մինչև 1 ր. 60 կ., գարին 1 ր.—1 ր. 10 կ.։ Առևտուրը շատ ընկած է. տրտնջում են բոլորը՝ մանրավաճառ, մանուֆակտուրիստ, ալիւրավաճառ և մինչև անգամ սակագնից 2 կ. աւելի ծախող մսագործը։

Մասնաւոր հողատէրերից հողերի յետ գնման առիթով արդէն յայտարարված է ի գիտութիւն ժողովրդի։ Տաթևի վանքապատկան գիւղական հասարակութիւններին էլ է յայտնված, որ ներկայ տարվայ յունվարի 1-ից այլևս ոչ մի հարկ վանքը չի ստանալու և ընդհատվում են վանքին տալիք հողահարկերը։ Հողերի չափումը և բաժանումն ու յետ գնումը կը սկսվի գարնանը, երբ եղանակները բացվեն։

Գաւառիս նկատմամբ միակ ուրախալի երևոյթը ամսիս վերջերին Գորիսից մինչև Հին-Նախիջևանի սահմանը, Արիքլուի սարը շինվելիք խճուղու անցուղին է, որի իրականանալուց յետոյ թերևս երթևեկութիւնը կանօնաւորվի և դէպի Հին-Նախիջևան։

Կրթական գործը մեր գիւղական ծխական դպրոցներում իր հանգիստ և խաղաղ ընթացքի մէջ է. գիւղական համեստ և պակասաւոր կեանքը տանելի է իր բոլոր անյարմարութիւններով մեր բոլոր գիւղական ուսուցիչներին, և նրանք կռուելով ամեն խոչընդոտների դէմ՝ լողում են աղքատութեան և դժուարութեան ծովում ինչ-որ երևակայական ափ հասնելու, նպատակի իրագործում տեսնելու։

Ինչպէս ասում են, մեր վիճակը շուտով յաջորդ տեսնելու բաղդը կունենայ յանձինս Վահան աւ. ք. Տէր-Գրիգորեանի (մեղրեցի), որը շուտով վեղար է ընդունելու և ճանապարհվելու է Զանգեզուր։

Չորրորդ տարին է, որ վիճակս զրկված է վիճակային յաջորդ ունենալու բաղդից, որի կարիքը այնքան զգալի է մեր դպրոցական-կրթական և այլ ասպարէզներում։

Յուսանք, որ մեր նոր փոխանորդը իր հանրօգուտ գործունէութեամբ և աշխատանքով միանգամայն կը բաւարարի այն պահանջը, որ ունի մեր գաւառը, որը անհրաժեշտ է շատ թէ քիչ բարելաւ վիճակ ստեղծելու համար։ Սազանդարեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

◆ Բարձրագոյն ռեսկրիպտ յանուն Նորին Կայսերական Մեծութեան Կովկասի փոխարքայ, Պետական Խորհրդի անդամ, գեներալ-ադիւտանտ, կոմս Վօրոնցօվ-Դաշկօվին. «Կոմս Իլլարիոն Իվանովիչ. Կովկասում եւ Միջին-Ասիայում Ձեր Գերազանց քաջագործութեամբ Ձեր վրա ուշադրութիւն դարձնել տալով, Դուք վերջում Իմ անմոռանալի ծնողի հրամանատարութեան տակ մասնակցեցիք 1876—77 թ. թ. պատերազմին իբրեւ Ռուշչուկի զօրամասի պետ։ Դէպի Ձեզ տածած անկեղծ բարեկամութիւնը դրդեց ի Տէր հանգուցեալ Ալէքսանդր III Կայսրին հաստատել Ձեզ Կայսերական Պալատի մինիստրի պաշտօնը, որ Դուք վարեցիք համարեա 16 տարի շարունակ։ Իսկ վերջերս Դուք, Կովկասեան Իմ ներկայացուցչի կոչման մէջ աջողութեամբ նուիրում էք Ձեր ոյժերը այդ այլացեղ ծայրերկրի կառավարութեանը։ Շնորհակալութեամբ յիշելով Ձեր բազմամեայ ծառայութիւնները, Ես, ի վարձատրումն Ձեր այդ ծառայութիւնների, շնորհեցի Ձեզ Իմ անմոռանալի Պապի, ծնողի եւ Իմ գոհարազարդ երակի լուսանկարը։ Մնում եմ առ Ձեզ ընդ միշտ անխախտ բարեհաճ եւ խորապէս Ձեզ յարգող ՆԻԿՈԼԱՅ»։

◆ Թագաւոր Կայսրի ամենաողորմած հեռագիրը ի պատասխանի Կովկասի Փոխարքայի ուղարկած հեռագրի. «Թիֆլիս, գեներալ-ադիւտանտ կոմս Վօրոնցօվ-Դաշկօվին։ Հաղորդեցէք Վրաստանի էկզարխին, վրաց թեմի հոգեւորականութեան, կովկասեան զինուորական շրջանի քաջարի զօրքերին եւ բոլոր նրանց, որոնք Ձեր միջոցով Ինձ իրանց շնորհաւորանքները մատուցին, Իմ սրտագին շնորհակալութիւնը Ինձ արտայայտած բարեմաղթութիւնների եւ հպատակութեան զգացմանց համար։ ՆԻԿՈԼԱՅ»։

◆ Մարտի 3-ին, շաբաթ, երեկոյեան ժ. $7^1/_2$-ին, Մանթաշեան առևտրական դպրոցի դահլիճում (Բեբուտօվսկայա փողոց) տեղի կունենայ հայկական գրերի գիւտի 1500-ամեակի Թիֆլիսի Յօբելեանական Մասնաժողովի անդամների նիստը, որից յետոյ Հ. Առաքելեան կը դասախօսէ «Ռոմանօվների Արքայական Տան և հայերի յարաբերութիւնների», ինչպէս և հայոց հարցի մասին։ Կողմնակի անձինք ևս կարող են ներկայ լինել։ Մուտքը ազատ է։ Միայն վաղօրօք պէտք է ստանալ տոմսակ «Մշակի» խմբագրատան մէջ, կամ նոյն օրը՝ դասախօսութիւնից առաջ, առևտրական դպրոցի մուտքում։

◆ Կոմսուհի Ելիզավետա Անդրէևնա Վօրոնցօվա-Դաշկօվան մարտի 3-ին Արքունական թատրոնում կազմակերպում է ինվալիդական երեկոյթ համերգային բաժնով յօգուտ կովկասեան ինվալիդների։

◆ Կարգադրված է շտապ միջոցներ ձեռք առնել ֆիլօկսէրայի դէմ Կախէթիայում, Դուշէթի, Գօրու և Թիֆլիսի գաւառներում։

◆ Վերջերս Թիֆլիսում հիւր եղաւ երաժշտագէտ Մ. Իվանովը, որը «Н.Вр.»-ում այժմ պատմում է իր տպաւորութիւնները։ Իվանովի ասելով ոչ մի սեպարատիզմ Կովկասում գոյութիւն չունի. վրացիք և հայերն անպայման լօյեալ են, նուիրված են ռուսական պետականութեանը։ Իվանովի կարծիքով Թիֆլիսի երաժշտական դպրոցը լաւ վիճակ ունի։ Երաժշտական պատմագէտ Վ. Ղորղանեանը աչքի ընկնող անձն է։ Անհրաժեշտ է Թիֆլիսում կօնսերվատօրիա բանալ, որպէս զի տաղանդաւոր գործիչները հնարաւորութիւն ունենան զարգացնել իրանց ոյժերը։

◆ Կ. Հ. Բ. Ընկ. խորհուրդը խնդրում է մեզ տպել, որ նա խորին շնորհակալութեամբ ստացել է կոմսուհի Ե. Ա. Վօրոնցօվա-Դաշկօվայից երեսուն պուդ ձուկ ընկերութեան ձրի և էժանագին աշակերտական ճաշարանի համար։

◆ Կովկասի փոխարքայի կից գտնվող առանձին յանձնարարութիւնների աւագ օֆիցէր գնդապետ Վ. Թամամշեանը նշանակվեց առանձին յանձնարարութիւնների գեներալի պաշտօնում փոխարքայի մօտ։

◆ Թիֆլիսի Հրէական Բարեգ. Ընկերութեանը թոյլատրված է կազմել երեկոյթ մարտի 9-ին։

◆ Թիֆլիսի քաղ. վարչութեան անդամ Մ. Ալթարեգեան մի նախագիծ է կազմել այն մասին, որ կարելի է կրճատել վարչութեան դիւանական բաժանմունքի ծառայողների աւելորդ թիւը, որով քաղաքի ծախքերը տարվայ ընթացքում կը պակասեն 3500 րուբլով։

◆ Այսօր, երեկ. ժ. 8-ին, Թիֆլիսի Հասարակական ակումբում տեղի կունենայ զրոյց ընդհանուր թէյի ժամանակ՝ Դրէյերի «17 տարեկաններ» և Շանթի «Հին Աստուածներ» դրամաների շուրջը։ Ակումբի աւագների խորհուրդը որոշել է հիւրերից մուտքի վճար առնել 20 կ.։

◆ Թիֆլիսում նորերս բացված երկու փուռերը աջողութեամբ գործում են, վաճառելով հացը կէս կօպէկով պակաս՝ համեմատած միւս փուռերի գների հետ։ Այդ լաւ գործի նախաձեռնողները այժմ մտադիր են բանալ երրորդ փուռ։

◆ Մեկնեց Պետերբուրգ իշխ. Չէլօկաևը Կախէթիայի երկաթուղու կառուցման գործի առիթով։

◆ Ինչպէս մեզ հաղորդում են, ջութակահար Վրոյր մարտի 10-ին երաժշտական դպրոցի դահլիճում կը տայ մի համերգ։

◆ Բագւում Լ. Շանթի «Հին Աստուածներ» պիէսի մասին դասախօսութիւններ կարդացին Թիֆլիսեցիներին ծանօթ դասախօս Ա. Մալխազեանը և Քիւրքճեան Գ. Իփէկեանը։ Նոյն պիէսի մասին այսօր Բագւում լինելու է գրական դատ։

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂ ԱՐ.

ԳԱՒԱՌԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ

—

Շամախի, 17 փետրվարի

Ամսիս 16-ին ս. Սահակի տօնի օրը տեղիս հայոց ծխական դպրոցի մանկավարժական կազմը տօնեց հայոց տառերի գիւտի 1500-ամեայ և տպագրութեան 400-ամեայ յօբելեանները մի շքեղ երեկոյթով։ Դպրոցի թատերասրահը լիքն էր հանդիսականներով։ Հանդէսը բացվեց «Ով Հայոց Աստուած» օրհներգով, որ երգեց քառաձայն խումբը ղեկավարութեամբ աւագ ուսուցիչ Գ. Մելիքեանի։ Ապա աւ. ուսուցիչը խօսեց հայ ազգի անցեալ և արդի վիճակի մասին, երկար կանգ առնելով ազգ և ազգայնութիւն հասկացողութիւնների բացատրութեան վրա և շեշտելով նրանց կարևորութիւնը հանուր քաղաքակրթութեան տեսակէտից։ Ուսուցիչներ՝ Մ. Խաչատրեան և Յ. Բարղամեան կարդացին հակիրճ ռեֆերատներ, առաջինը գրերի գիւտի և տպագրութեան, երկրորդը հայ գրականութեան մասին։ Ուսուցչուհիներ տ. տ. Վ. Աթանասեան և Շ. Մելիքեան արտասանեցին երկու կտոր Ա. Ծատուրեանի բանաստեղծութիւններից։ Քառաձայն խումբը մէջ ընդ մէջ երգեց «Բամբ, որոտան», «Ով դու բարեկամ», «Հայոց քաջազունք» և ուրիշ ժողովրդական երգեր։ Համերգից յետոյ մանկ. կազմի անդամները խաղացին «Ընդունելութեան օրը» վօդէվ. 1 գործ.։ Վերջը դրեցին կենդանի պատկերներ։ Զուտ արդիւնքը յատկացված է յօգուտ դպրոցի։

Գագաւոն

ՕՐՎԱՅ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

◆ Կ. Պօլսի ռուսաց դեսպան Գիրսը պահանջեց Բ. Դռնից պաշտօնանկ անել Կ. Պօլսի բերդապետ Ջէմալ-բէյին և ոստիկանապետ Ազիմ-բէյին՝ սերբիական դեսպանատան մէջ խուզարկութիւն կատարելու համար։ Բ. Դուռը վճռեց ներողութիւն խնդրել, բայց համաձայն չէ արձակել նրանց պաշտօններից։

◆ Մեծ պետութիւնների դեսպաններին հրաման ուղարկվեց Լօնդօն՝ խուսափել վճռական բանակցութիւններից Թիւրքիայի ներկայացուցիչների հետ։

◆ Կ. Պօլսում զինուորական նախկին մինիստր Նազըմ-փաշայի մահվան 40-օրեակի առիթով կայացած հոգեհանգստից յետոյ Թիւրք ամբոխը դիմեց դէպի Բ. Դուռը ցոյց անելու նպատակով. սակայն նրա առաջը կտրեց երիտասարդ-Թիւրքերից ուղարկված զօրամասը. կալանաւորվեցին շատերը։

◆ Յոյն ղեկավար շրջանները, արբեցած իրանց զօրքերի յաղթութիւններից, որոշել են պատերազմը շարունակել մինչև Թիւրքիայի իսպառ թուլանալն ու ընկճվելը։

◆ Վիլհէլմ կայսրը հեռագրով շնորհաւորեց յունաց գահաժառանգին՝ Եանինան վերցնելու առիթով։

◆ Կ. Պօլսում դրութիւնը սպառնական է։

◆ Կայսերական պալատի մինիստր բարօն Ֆրէդերիկսին յաջորդում է իշխան Կօչուբէյը։

◆ Վիէննայում մօտ 30,000 սուֆրաժիստուհի ցոյց արին։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

(ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՀԵՌ. ԳՈՐԾ.)

26 փետրվարի

ԲՕԴԱՅԲՕ։ Բացվեց Լէնայի և Վիտիմի շրջանների ոսկարդիւնաբերողների 14-րդ համագումարը։

ՍԻԴՆԷՅ։ Շաբաթ օրը այստեղ և շրջակայքում ուրագանը ահագին վնասներ պատճառեց։ Չորս մարդ սպանվեցին։ Մի քանի տարածութեան վրա փողոցները ու ճանապարհները փչացել են։ Շատ շէնքեր վնասվեցին։

ԵԿԱՏԵՐԻՆՕՍԼԱՒ. Վեց անյայտ մարդ Լօզօվայա փողոցի Միացեալ բանկից յափշտակեցին 40,000 րուբլի։

ՀՌՈՄ։ Պապի առողջութիւնը լաւանում է։

ԲԵՐԼԻՆ։ Լանդտագին օրինագիծ ներկայացվեց յատկացնելու կէս միլիոն մարկ պրուսական երկաթուղիների ցանցը զարգացնելու համար։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Խիվայի խանը մեկնեց Խիվա։

Կազանի զինուորական շրջանի շտաբի պետ Իւդէնիչը նշանակվում է կովկասեան զինուորական շրջանի շտաբի կառավարիչ։

ՉԸ ՀԱՍԾՎԱԾ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

26 փետրվարի

Մանխալնոտից — Կարապետեանցին, Գանձակից—Մելքօվին, Նուխից —Գէօրքօվին, Վլադիկավկազից — Թանգիէվին, Գրօզնիից—Թօմասօվային։

Խմբագիր՝ Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Յ. ՏԷՐ ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՎԵՐՋԻՆ ԱԿԱՆԱՒՈՐ ՆՈՐՈՅԹ!
ՍԱՆՍԱՅ
• ԴՈՒԽԻ • ՍԱՊՕՆ • ՕԴԷԿՕԼՕՆ •
Т-во С. И. ЧЕПЕЛЕВЕЦКІЙ съ С-ми. Москва.
(М. 98526) 9—1

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ
(Ձմերային երթևեկութիւն)
Ժամերը նշանակված են Թիֆլիսի ժամանակով)
ԹԻՖԼԻՍԻՑ ՄԵԿՆՈՒՄ Է

ԲԱԳՈՒ.—Արագ գնացքը № 2—10 ժ. 12 ր. առ. հասնում է Աղստաֆա 12 ժ. 30 ր., Գանձակ 2 ժ. 55 ր., Եւլախ 4 ժ. 26 ր., Հաջի-Կաբուլ 8 ժ. եր., Բագու 11 ժ. 8 ր. գիշ.։ Պոստատար գնացքը № 4—12 ժ. 36 ր. գիշ., հասնում է Աղստաֆա 3 ժ. 30 ր. գիշ., Գանձակ 6 ժ. 41 ր. առ., Եւլախ 8 ժ. 38 ր. առ., Հաջի-Կաբուլ 1 ժ. 13 ր. ցեր., Բագու 5 ժ. 36 ր. ցեր.։ Մարդատար գնացքը № 6—6 ժ. 31 ր. եր., հասնում է Աղստաֆա 8 ժ. 51 ր. եր., Գանձակ 11 ժ. 20 ր. գիշ., Եւլախ 12 ժ. 56 ր. գիշ., Հաջի-Կաբուլ 4 ժ. 40 ր. գիշ., Բագու 7 ժ. 53 ր. առ.։ Խառն գնացքը № 106 (Մարդատարի արագութեամբ ապրանքների համար)—5 ժ. 53 ր. գիշ., հասնում է Աղստաֆա 10 ժ. առ., Գանձակ 2 ժ. 31 ր. ցեր., Եւլախ 5 ժ. 45 ր. ցեր., Հաջի-Կաբուլ 12 ժ. 29 ր. գիշ., Բագու 6 ժ. 54 ր. առ.։

ԲԱԹՈՒՄ.—Մարդատար գնացքը № 11—10 ժ. 3 ր. գիշ., հասնում է Միխայլովօ 1 ժ. 58 ր. գիշ., Բաթում 10 ժ. 21 ր. առ.։ Պոստատար գնացքը № 2—9 ժ. 50 ր. առ., հասնում է Միխայլովօ 1 ժ. 55 ր. ցեր., Բաթում 11 ժ. 7 ր. գիշ.։ Մարդատար գնացքը № 5—4 ժամ 38 ր. ցերեկվայ հասնում է Միխայլովօ 8 ժ. 44 ր. եր., Բաթում 5 ժ. 56 ր. գիշ.։ Խառն գնացքը № 107 (մարդատարի արագութեամբ ապրանքների համար)—4 ժ. 20 ր. գիշ., հասնում է Միխայլովօ 10 ժ. 10 ր. առաւ., Բաթում 12 ժ. 26 ր. գիշ.։

ՋՈՒԼՖԱ-ԵՐԵՒԱՆ.—Պոստատար գնացքը № 4/3—1 ժ. 11 ր. գիշ., հասնում է Ղարաքիլիսա 8 ժ. 30 ր. առ., Ալէքսանդրօպօլ 12 ժ. 7 ր. ցեր., Էջմիածին 5 ժ. 22 ր. ցեր., Ուլուխանլու 5 ժ. 49 ր. ցեր. (առանց Երևան մտնելու), Նախիջևան 10 ժ. 15 ր. եր., Ջուլֆա 11 ժ. 40 ր. գիշ.։ Մարդ.-ապրանքատար գնացքը № 8/79 (միայն II և III կարգի վագօններով)—1 ժ. 6 ր. ցեր., հասնում է Ղարաքիլիսա 8 ժ. 23 ր. եր., Ալէքսանդրօպօլ 12 ժ. գիշ., Էջմիածին 6 ժ. 29 ր. գիշ., Ուլուխանլու 6 ժ. 11 ր. առ., Երևան 5 ժ. 51 ր. առաւ.։ Մարդատար-ապրանքատար գնացքը № 6/5—8 ժ. 10 ր. եր., հասնում է Ղարաքիլիսա 3 ժ. 37 ր. գիշ., Ալէքսանդրօպօլ 7 ժ. 14 ր. առ., Կարս 10 ժ. 48 ր. առ.։

ԲՕՐԺՕՄ.—Մարդատար գնացքը № 95/10—3 ժ. 17 ր. ցեր., հասնում է Գօրի 5 ժ. 57 ր. ցեր., Բօրժօմ 9 ժ. 13 ր. եր.։

ԹԻՖԼԻՍ Է ՀԱՍՆՈՒՄ

ԲԱԳՈՒԻՑ.—Արագ գնացքը № 1—9 ժ. 10 ր. եր. Պոստատար գնացքը № 3—9 ժ. առ.։ Մարդատար գնացքը № 5—3 ժ. 46 ր. ցեր.։ Խառն գնացքը № 107—3 ժ. 8 ր. գիշ.։

ԲԱԹՈՒՄԻՑ.—Արագ գնացքը № 12—8 ժ. 50 ր. առ., Պոստատար գնացքը № 4—11 ժ. 32 ր. գիշ.։ Մարդատար գնացքը № 6—5 ժ. 15 ր. ցեր.։ Խառն գնացքը № 106—5 ժ. 15 ր. գիշ.։

ՋՈՒԼՖԱ-ԵՐԵՒԱՆԻՑ.—Պոստատար գնացքը №40/3—8 ժ. առ.։ Մարդ.-ապրանքատար գնացքը № 6К./5—1 ժ. 28 ր. ցեր.։ Մարդ.-ապրանքատար գնացքը № 8Э/7—5 ժ. 28 ր. ցեր.։

ԲՕՐԺՕՄԻՑ.—Մարդատար գնացքը № 9/10Б—11 ժ. 22 ր. առ.։

Եղբ. Ավսարգիսովների
այգին բաց է թողնում արտասահմանեան, ռուսական և տեղական լաւ տեսակի ՊՏՂԱՏՈՒ ԾԱՌԵՐ չափաւոր գներով։ Կատալօգները ուղարկվում են ՁՐԻ։
Հասցէն՝ Ст. Скра (Зак. ж. д.), Авсаркисову.
(Ե.Հ.Կ.) 123. 7—7

ԻՆՏԵԼԻԳԷՆՏ
ՄԻ ՀԱՅՈՒՀԻ
ցանկանում է ունենալ տնտեսուհու պաշտօն։ Հմուտ է նաև կարուձևին։ Հասցէն՝
Саратовъ, до востребованія, А. М.
(օ. մ.) 151. 6—3

23 апрѣля 1913 года въ г. Кіевѣ состоится розыгрышъ
Серебряной лотереи
въ пользу Кіевской Общины сестеръ милосердія Краснаго Креста.
Общая стоимость выигрышей
35.000 рублей.
Главный выигрышъ слитокъ чистаго золота 96°, вѣсомъ 18 фун. 42 зол.,
стоимостью 10.000 рублей.
По желанію выигравшаго, Община согласна купить выигрышъ за
10.000 рублей.
Дешевле 5 рублей выигрышей нѣтъ.
Подробныя правила лотереи, списокъ выигрышей и условія покупки выигрышей Общиной у выигравшихъ высылаются безплатно. Адресъ Общины: г. Кіевъ, М. Благовѣщенская 75. Цѣна билета 50 копѣекъ.
Учрежденіямъ и предпріятіямъ, а также лицамъ, за которыхъ ручаются учрежденія и предпріятія, въ которыхъ они служатъ, билеты высылаются безъ предварительной присылки денегъ.
За распространеніе билетовъ Община предлагаетъ удерживать 5% вырученной за билеты суммы.
(15, 30) 961. 6—6

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ
„ԾԻԾԱՂԱԲԵՐ"
ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ
Գինն է 30 կօպէկ.
Հայրիկ, Բիսմարկ, Լօռիս-Մէլիքեան, Պուշկին, Տուրգենեվ, Կռիլօվ, Վօլտէր, Միլտօն, Թաղիադեան, Պարոնեան, Գօշ-Մխիթար, Եզօպոս, Պըլը-Պուղի, Մոլլա-Նասրէդդին, և ուրիշ ազգային ու օտար զուարճախօսներ։
200-ի չափ ԸՆՏԻՐ զուարճախօսութիւն անեկդօտներ, հայ և օտար բաժիններով, 128 երես։
Մեզնից գումարով պահանջողներին՝ մինչև 25 օրինակ ուզողին՝ 20% զեղչ. մինչև 50 օրինակ ուզողին՝ 25%. 50 օրինակ աւել ուզողին 30% զեղչ։ Ճանապարհածախսը գնողի հաշւին։ Պահեստը մեզ մօտ։ Ցանկացողները կարող են դիմել մեր մշտական հասցէով՝ Тифлисъ, Лысогорскій переул., № 6. Хачатуру Хачатріану.
Դիմել նաև Թիֆլիսի գրավաճառներին։
(Հ.Կ.) 128. 10—5

Կրասնովոդսկի հայոց և Լուսաւորիչ եկ. համար հարկաւոր է միջնակարգ կրթութեամբ
ՄԻ ՔԱՀԱՆԱՅ,
որը տարեկան կունենայ արդիւնք 1500—1800 րուբլի։ Դիմել հետևեալ հասցէով՝ Красноводскъ (Закасп. обл.), Ктитору Шамиру Багирянъ.
(ա. օ.) 152 5—5

Типографія канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ Лорисъ-Меликовская улица, домъ казенный